

## ՎԱՐԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ: «ՔՈՉԱՐԵԱՆԸ ՄԱՐՏԻ 1-ՈՎ ԾԱՆՐԱԳՈՅՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԴՐԵՑ ԵՐԿԻՐԸ»

Մեկնաբանելով Ռոբերտ Քոչարեանի վերջին հարցազրույցը, ՄԴՀԿ Կեդրոնական վարչության անդամ Վահան Շիրխանեան «Հայ-նիւզ» կայքէջին ըսած է.

«Ես մի քանի անգամ ասել եմ, որ Ռոբերտ Քոչարեանի 10 տարիները նշանաւորուել են Հայաստանի համար ճակատագրական իրադարձութիւններով՝ Հոկտեմբերի 27, Ապրիլի 12, Մարտի 1 եւ մի քանի կեղծուած ընտրութիւններ: Բայց դա բոլորը չէ: Քոչարեանի տասնամեակը տարիներ են, երբ Հայաստանը դարձաւ սնանկ երկիր: Ի՞նչ են անում մի վարձու պաշտօնեայի հետ, երբ նա սնանկացման է հասցնում իրեն վատահում օբիեկտը: Քոչարեանը Հայաստանը հասցրեց սնանկացման՝ քաղաքական, տնտեսական, հոգեբանական եւ մի շարք այլ առումներով: Եւ ամենատարօրինակն այն է, որ համաօրէն փորձում է ներկայացնել, որ դրանք եղել են զարգացման տարիներ՝ ի տարբերութիւն այս երեք տարիների»:

Այն հարցին, թէ Քոչարեան ըսած է, որ շատերը համեմատութիւններ կ'ընեն իր նախագահութեան եւ այս իշխանութեան տարիներուն միջեւ, Վահան Շիրխանեան ըսած է.



ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեան

«Կը լինեն մարդիկ, որոնց համար Քոչարեանի ժամանակ օրէնքը գոյութիւն չունէր, զբաղուած էին թալանով: Բնական է, որ նրանք երանի կը տան այդ ժամանակներին: Ինչ վերաբերում է Մարտի 1-ին, ապա այն Քոչարեանի խղճին է: Նա ծանրագոյն վիճակում դրեց եւ երկիրն եւ եկող իշխանութիւններին»:

## ԴԱՏԱՐԱՆԸ 21 ՕՐ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԱԾ Է ԹՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ՝ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՐԻԿԱԳՅԱՅԵՐՈՒ ԴԱՏԻՆ

Ամերիկեան դատարանը 21 օր ժամանակ տուած է թրքական կառավարութեան՝ պատասխանելու համար խումբ մը ամերիկահայերու կողմէ բացուած դատին, որու հիման վրայ փոխհատուցում կը պահանջուի 1915 թուականի իրադարձութիւններուն պատճառաւ իրենց կորուստներուն դիմաց: Այս մասին թրքական «Հիւրըրիյէթ» թերթին ըսած է դատական հայցը ներկայացնող փաստաբան Վարդգէս Եղիաեան:

Դատական այս գործով, ցեղասպանութեան զոհերու ժառանգորդները կը պնդեն, որ Թուրքիոյ կառավարութիւնը իւրացուցած է իրենց նախնիներուն պատկանող՝ տասնեակ հեկտարներու համող հողատարածքը, որուն դիմաց կը պահանջեն 64 միլիոն տոլար փոխհատուցում:

Այդ հողակտորները կը գտնուին Թուրքիոյ հարաւային Ատանա նահանգին մէջ, ուր այժմ տեղակայուած է «Ինճիրլիքի» ամերիկեան ռազմակայանը:

«Այս հայցը կարելոր է ոչ միայն հայ, այլեւ միջազգային համայնքին համար», - ըսած է Եղիաեան, կարծիք յայտնելով, որ այն նախադէպ կրնայ դառնալ եւ ճամբայ բանալ՝ նման տեսակի այլ

դատերու համար: «Թուրքիոյ կառավարութիւնը ու պետութիւնը շահոյթներ կը ստանան այս սեփականութիւններու շահագործումէն եւ պէտք է պատասխան տան իրենց քայլերուն համար», - ըստ «Հիւրըրիյէթի» ըսած Լոս Անճելըսահայ փաստաբանը, որ նախապէս, երկու այլ փաստաբաններու հետ միասին, շահած էր ցեղասպանութեան զոհերու ժառանգորդներու դատերը, ընդդէմ երկու ապահովագրական ընկերութիւններու՝ ապահովելով միլիոնաւոր տոլարներու հատուցում:

Այս անգամ դատը բացուած է ոչ թէ միջազգային ընկերութիւններու, այլ թրքական կառավարութեան ու երկու մեծ դրամատուններու դէմ, որոնցմէ մէկը Թուրքիոյ կենտրոնական դրամատունն է:

«Թուրքիա խախտած է միջազգային օրէնքները եւ ապօրինաբար բռնագրաւած է օրինաւոր տէրերուն պատկանող սեփականութիւնը: Բացի այդ, Թուրքիա խախտած է նաեւ սեփական սահմանադրութիւնը ու Լօզանի պայմանագիրը: Սակայն առաւել կարելոր է այն, որ հետագային ապօրինաբար

## ԵՐԱՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԴՐԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԸ ՆՇՄԱՐԷ

Վիեննայի մէջ, ԵԱՀԿ-ի մնացուած խորհուրդի հրապարակած յայտարարութեան մէջ, Եւրամիութիւնը արձանագրած է վերջին քաղաքական զարգացումները Հայաստանի մէջ՝ դրական որակելով գնումը:

«Մենք կ'ողջունենք այն իրողութիւնը, որ երկար ժամանակ ետք, առաջին անգամ Երեւանի քաղաքային իշխանութիւնները թոյլատրեցին քաղաքական ընդդիմութեան Ապրիլ 28-ին հանրահաւաք կազմակերպել Ազատութեան հրապարակի վրայ», - կը յայտարարէ Եւրամիութիւնը, յոյս յայտնելով, որ հանրահաւաք կայացնելու հետագայ դիմումները եւս կ'արժանանան նոյն արձագանգին:

«Այս հանրահաւաքի ընթացքին պահպանուեցաւ կարգուկանոնը, ինչ որ, ըստ ամենայնի, արդիւնք էր իրաւապահ մարմիններու եւ ընդդիմադիր խումբերու միջեւ արդիւնաւէտ համագործակցութեան: Հաշուի առնելով, որ 2012 թուականին Հայաստանի մէջ պիտի մեկնարկէ նոր ընտրաշրջանը, մենք յատուկ կարեւորութիւն կու տանք հաւաքներու ազատութիւնը յարգելուն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Եւրամիութիւնը նաեւ կ'ողջունէ Սերժ Սարգսեանի Ապրիլի 20-ի յայտարարութիւնը, ուր կոչ կը կատարուէր առաւել մանրակրկիտ հետաքննութիւն կատարել՝ 2008 թուականի մարտիմէկեան իրադարձութիւններու առնչութեամբ: «Այդ նոյն բովանդակութեամբ կ'ողջունենք, որ այդ դէպքերէն



յետոյ դատապարտուած եւ ազատագրուած երեք ընդդիմադիր գործիչներ՝ Յարութիւն Ուռուտեան, Ռոման Մնացականեան եւ Արամ Բարեղամեան, վերջին շաբաթներու ընթացքի վաղաժամ ազատ արձակուած են: Կոչ կ'ընենք Հայաստանի իշխանութիւններուն շուտ ազատ արձակել բոլոր մնացեալ գործիչները», - ըսուած է յայտարարութեան մէջ: - «Եւրոպական միութիւնը կը գտնէ, որ 2008 թուականի մարտեան դէպքերու մանրակրկիտ հետաքննութիւնը եւ այդ դէպքերու առնչութեամբ ձերբակալուած բոլոր անձերու ազատ արձակումը կ'օգնեն Հայաստանի իսկական յառաջիկայումս»:

Եւրամիութիւնը անգամ մը եւս կը շեշտէ այն կարեւորութիւնը, որ կը տրուի Հայաստանի հետ յարաբերութիւններու զարգացման, եւ կը յորդորէ Հայաստանի կառավարութեան՝ լիարժէքօրէն օգտուիլ Արեւելեան գործընկերութեան ու Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան ընձեռած կարելիութիւններէն:

## ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ 25 ՎԱՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ



Մեծարանքի արժանացած վաստակաւոր ընկերները Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական վարչութեան եւ շրջանի վարիչ Մարմնի ներկայացուցիչներուն հետ

Հարաւային Գալիֆորնիոյ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան «Փարամագ», «Սպաս Գիւլ» եւ «Արսէն Կիտուր» մասնաձեւերը կազմակերպութեամբ եւ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի հովանաւորութեամբ, Ուրբաթ Մայիսի

13ին, Փասադինայի Հ.Կ.Մ.ի «Կարօ Սողանայեան» սրահը փութացած էին զաղափարապաշտ ընկերներու եւ համակիրներու հոծ բազմութիւն մը, ներկայ գտնուելու վաստակաշատ ընկերներու ի պա-

## «ԵՐՐՈՐԴ ՈՒԺՆ» ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒԵՑ

### ՅԱԿՈՒԲ ԲԱՒԱԼԵԱՆ

Ռոբերդ Քոչարեանի վերջին հարցազրույցը առանձնաշատուկ էր իր ոճով: Ակնյայտ է, որ Քոչարեանը փորձել է տեղադրություն անաչափաբարձր արտա-մաքանություն մէջ: Նա որեւէ արտաուց, իրեն յատուկ, մեղմ ասած ֆուլկլորային որեւէ որակում չտուեց ներքաղաքական գործընթացների որեւէ սուբիեկտի: Քոչարեանը փորձեց չղուծ անել Մասմանադրութեանը, օրէնքին, իրաւունքին, քաղաքական կարգին:

Նաեւ փորձեց իրադարձութիւնների զարգացման որոշակի սխեմա առաջարկել Սերժ Սարգսեանին, նրան յուշելով, թէ հասարակութիւնը Մարտի 1-ը չիշուծ է, որովհետեւ չկան կոնկրետ սպանութեան բացառություններ: Այսպիսին, եթէ լինեն մարդիկ, որոնք կը ձեռքարկուեն ու կը մեղադրուեն գոհուած քաղաքացիների սպանութեան համար, կամ կ'արդարացուեն ինքնապաշտպանութեան հիմքով, ինչի մասին եւս ակնարկեց Քոչարեանը, ապա հանրութիւնը Մարտի 1-ի մասով կարող է հանդարտուել:

Ռոբերդ Քոչարեանը կարծես թէ ակնկալում է, որ եթէ Սերժ Սարգսեանն այդ ամէնն անի, ապա ընդդիմութիւնն էլ կարող է մի փոքր մեղմել Մարտի 1-ի մասով դիրքորոշումը, քանի որ կ'ունենայ հանրութեանը ցոյց տալու բան, թէ անա պայքարի արդիւնքում արդէն իսկ կան գոնէ սպանութիւն կոնկրետ կատարողներ, իսկ հրաման տուողների մասն էլ նորից կը մտնի շահմատի տրամաբանութեան մէջ: Իհարկէ, այդ հաշուարկը առժամանակ է լուծում հրաման տուողների հարցը, քանի որ եթէ շահմատային տրամաբանութիւնն այսպէս շարունակուի, ապա յաջորդ փուլերում էլ արդէն հրաման տուողների մասով է առաջանալու կոնկրետ գործողութիւնների անհրաժեշտութիւն, եթէ

շահմատի կողմերը չեն ուզում տեսնել հիասթափութեան կոնկրետ հետեւանքներ:

Այնպէս որ, թէեւ առաջին հայեացքից Քոչարեանի առաջարկն ընդունելի է բոլոր կողմերի համար, այդուհանդերձ երկարաժամկետ հատուածում այն ձեռնտու է միայն Քոչարեանին: Այդուհանդերձ, նա պաշտօնաթողութիւնից յետոյ թերեւս առաջին անգամ է աչքի ընկնում քաղաքական առաջարկով, քաղաքական մտածողութեան դրսեւորման փորձով: Ու, ինչպէս ասում են, առաջինը միշտ «կուտ է գնում»: Բայց, այն «կուտ» գնաց թերեւս ոչ թէ Քոչարեանի, այլ այն քաղաքական ուժերի համար, ովքեր

**Քոչարեանն հարուած է հասցնում քաղաքական դաշտին, այն իմաստով, որ կարծես թէ կանխաւ մեղադրական հիմք է տալիս որեւէ քաղաքական այլընտրանքի համար, որ կարող է ձեւաւորուել Կոնգրէսի եւ իշխանութեան սկսած գործընթացին զուգահեռ**

ներկայում հանդէս են գալիս Կոնգրէսի եւ Սերժ Սարգսեանի շահմատի քննադատութեամբ, այն որակելով գործարք հասարակութեան դէմ:

Բանն այն է, որ ըստ երեւոյթի տարուելով քաղաքականութեան հաճոյքով, Ռոբերդ Քոչարեանն իր հարցազրույցում որոշեց գնահատել ոչ միայն մարտի մէկեան թեմայի շուրջ ստեղծուած իրավիճակն ու փոխազանաւէտ փոխդիմադրանքն ու իրազարկել կողմերին, այլ նաեւ որոշեց գնահատել ներքաղաքական իրավիճակը, Կոնգրէս-իշխանութիւն գործընթացը, որը փաստօրէն նրան ստիպել էր բացուել Մարտի 1-ի մասով եւ որոշակի փոխդիմադրանք որոնել:

Ըստ երեւոյթի, Քոչարեանը հարցազրույց տալուց կամ ձեւակերպելուց երկար չի կարողացել մնալ քաղաքական տրամաբանութեան շրջանակում եւ իր համար էլ

աննկատ անցել է կամ վերադարձել է անձնական զգացումների ոլորտ, եւ որոշել է պարզապէս հարուած հասցնել իրեն փոխդիմադրանքի մղած Կոնգրէսին ու իշխանութեանը, նրանց երկխօսութիւնը գնահատելով կոռուպցիայի տանող գործարք:

Բայց, դրանով Քոչարեանը ոչ թէ Կոնգրէսին կամ իշխանութեանն է հարուածել, կամ խայթել, այլ այն քաղաքական ուժերին, որոնք ներքաղաքական գործընթացը նոյն կերպ են գնահատում, համարելով, որ դա գործարք է հասարակութեան դէմ: Փաստօրէն, քաղաքականից անցնելով անձնական զգացումների տիրոյթ, Քոչարեանը լուրջ հար-

ուած է հասցրել այդ ուժերի քաղաքական ծրագրերին: Բանն այն է, որ նրա տուած գնահատականով պարարտ հող է ստեղծուել այդ ուժերին քոչարեանական ծրագրերը սպասարկելու մէջ մեղադրելու համար: Այդպիսի մեղադրանքներ կային նաեւ մինչեւ Քոչարեանի հարցազրույցը, բայց դրանից յետոյ արդէն կարծես թէ դրանք յետին թուով հիմնաւորուած են կամ հաստատուած, կամ էլ ստանուծ են աշխուժանալու լրացուցիչ խթան եւ հիմք:

Կասկած չկայ, որ այդ պարագայում թացն էլ վառուելու է չորի հետ: Այսինքն, անշուշտ կան ուժեր կամ գործիչներ, որոնք միանգամայն անկեղծօրէն են քննադատում Կոնգրէսի եւ իշխանութեան երկխօսութիւնը, դա անում են համոզումով եւ առանց Քոչարեանի հետ որեւէ կապի: Բայց Քոչարեանի հարցազրույցի վերջնամասը հաւասարապէս հարուած

է թէ նրանց, թէ այն ուժերին, ովքեր իրենց քաղաքական հաշուարկներում այդուհանդերձ զգալի տեղ են տալիս Ռոբերդ Քոչարեանին: Այլ կերպ ասած, Ռոբերդ Քոչարեանն իր հարցազրույցի այդ մասով առաւել արդիւնաւէտ է թերեւս արգելափակում «երրորդ ուժի» նարաւոր ճանապարհը, քան դա օրինակ կ'անէր հենց ինքը ընդդիմութիւնը կամ ընդդիմութեան աշխույժ համակիրները:

Մի կողմից, իհարկէ, Քոչարեանն այդպիսով հարուած է հասցնում քաղաքական դաշտին, այն իմաստով, որ կարծես թէ կանխաւ մեղադրական հիմք է տալիս որեւէ քաղաքական այլընտրանքի համար, որ կարող է ձեւաւորուել Կոնգրէսի եւ իշխանութեան սկսած գործընթացին զուգահեռ: Միւս կողմից, սակայն, Քոչարեանն այդպիսով, կամայ, թէ ակամայ, ծառայութիւն է մատուցում քաղաքական դաշտին, գործունէութեան ազատութիւնից զրկելով այն ուժերին, որոնք փորձում էին վերակենդանանալ Կոնգրէսի եւ իշխանութեան սկսած գործընթացի քննադատութեան հաշուին:

Նաեւ, Քոչարեանը փաստացի իշխանութեանը, այսինքն Սերժ Սարգսեանին է զրկում այլընտրանքային նախագծերի միջոցով Կոնգրէսին հակակշուէրու եւ ժամանակի ընթացքում շահմատի սեղանից հանգրիստ հեռանալու հնարաւոր նախագծերից, քանի որ այդ բոլոր նախագծերը եւս հանգրիստ կարող են վերազրուել Քոչարեանի ծրագրերին, իրենց վրայ զգալով այդ ծրագրերի հանդէպ հասարակական կարծիքի բացասականութեան ազդեցութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»

## «ՌԵԳԻՈՆԱԼ» ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

### ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վերջերս դիտեցի 1939 թուականին նկարահանուած «Շունն ու կատուն» մուլտֆիլմը: Գործն ինքնին հրաշալի էր, սակայն թուամանեանի հեքիաթի բովանդակութիւնից այստեղ թոյլ է տրուել էական շեղում: Մուլտֆիլմում դերձակը՝ Կատուն, չի կարում Շան փափախն այն պատճառով, որ իր այս յաճախորդի բերած մորթին նա օգտագործել է մէկ այլ՝ գուցէ աւելի ազդեցիկ գնորդի՝ Դիւանբաշի Աջծի համար: Այսինքն՝ այստեղ բանական բացատրութիւն է տրուում Կատուի վարքին: Մինչդեռ թուամանեանի ստեղծագործութեան իմաստը, իմ կարծիքով, բոլորովին այլ է. հեքիաթն այն մասին է, որ հերոսների վարքը չի ենթարկւում որեւէ բացատրութեան, անմեկնելի է, իւրացիոնալ: Մեծ բանաստեղծի կողմից նկարագրուած յատուկութիւնները (որոնք, անշուշտ, ազգային չեն, այլ, աւելի շուտ, տարածաշրջանային են)՝ անպարտաճանաչութիւնը, գրուած եւ չգրուած օրէնքները նկատմամբ արհամարհանքը, խօսքին տէր ճկանգնելը, որոնք ուղեկցում են սեփական «արժանիքների»՝ ոչնչով չպատճառա-

բանուած գովերգմամբ՝ այդ բոլոր յատկանիշներն ամենեւին ուղղուած չեն որեւէ իրական օգուտ քաղելուն եւ բիզնեսում յաջողութիւնների հասնելուն: Ընդհակառակը՝ տիրապետում են ինչ-որ էմոցիաներ (տուեալ դէպքում՝ խորամանկ, ճարպիկ լինելու ձգտումը), որոնք ինքնաբաւ են եւ որեւէ արդիւնքի նպատակաւորուած չեն:

Այնպէս որ՝ երբ պայմանաւորուած էք որեւէ բանի մասին մեր հայրենակցի հետ, եւ նա, ի պատասխան ձեր որոշ կասկածների, ասում է՝ «Բա ես է՞ն մարդն եմ», հաստատ իմացէք, որ նա հենց «էն» մարդն է:

Մէկ այլ նման օրինաչափութիւն. երբ դուք գալիս էք որեւէ հիմնարկ, որի ղեկավարն ասում է՝ «Ինձնից առաջ ամէն ինչ քանդուած-թաւանում էին, իսկ ես շենացնում եմ», դա աներկբայօրէն վկայում է, որ այդ ղեկավարը պատրաստուած է քանդել եւ թալանել կամ արդէն իսկ թալանում է: Եւ երբ ՀՀ ներկայիս նախագահն ասում է՝ «Ես երախտապարտ եմ իմ նախնիներին»՝ նկատուում են իմ նախնիներին, ապա դա 20 տարուայ ընթացքում առաջին անգամ ար-

տայայտած բանական մօտեցումն է պետութեանը եւ դրա ղեկավարմանը:

Իրացիոնալ մտածողութեան եւս մի օրինակ. «Իմ դարդերը քիչ էին, հարեւանս էլ «Մերսեդես» առաւ»: Այդ ասացուածքի արդիական տարբերակն է՝ «հերիք չի մենք Եւրատեսիլի եզրափակիչ դուրս չեկանք, Ադրբեյջանն էլ այդ մրցութիւնում յաղթեց»: Եթէ ոեւէ մէկը կարեւորում է այդ միջոցաւորումը (եւ, ինչպէս արդէն ասել եմ, նրանց թուած չեմ), ապա պէտք է զբաղուել առաջին հերթին սեփական «դարդերով», մտածել, թէ ինչպէս ես կարող եմ ինձ աւելի լաւ դրսեւորել, ոչ թէ երազել հարեւանիդ տապալուելու մասին: Ընդհակառակը՝ կարելի է օրինակ վերցնել հարեւանից, վարձել որեւէ արտասահմանցու, ասենք՝ ֆրանսիացու եւ ուղարկել նրան Բաքու: Նախ՝ ֆրանսիացին այնտեղ աւելի քիչ խնդիրներ կ'ունենայ, քան հայը, երկրորդ՝ իր երզը կատարելուց յետոյ նարաւորութիւն կ'ունենայ բացականչելու՝ «Merci beaucoup»: Կամ՝ «Մերսի, Բաքու», որը տուեալ դէպքում նոյնն է լինելու:

«ԱՌԱՒՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ  
ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.

Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

**ՐԱՅԱՍԱՆ**

**«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ»-Ը ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է  
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՀԵՆՔՈՎ  
ԴԱՇԻՆՔ ԶԵԲԱԴՈՐԵԼ**

«Նոր ժամանակներ»-ը պատրաստուում է ձեռնարկել դաշինք՝ գաղափարական ընդհանրությունների հենքի վրայ, այս մասին Tert.am-ի հետ զրոյցում նշեց կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը: Նա հաղորդեց, որ ինքը հանդիպումներ է ունեցել ՀՌԱԿ համալսարանի կառուցիչ գործադիր-ատենապետ Յարուսթիան Առաքելյանի եւ այլ կուսակցությունների ղեկավարների եւ անդամների հետ՝ համագործակցության եզրեր գտնելու եւ Հայաստանում նախընտրական դաշինք ստեղծելու նպատակով:



**«Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյան**

«ՀԱԿ-ի եւ իշխանության՝ հետզհետե սերտացող կապերի արդիւնքում ձեռնարկուած իրավիճակը հիմա այնպիսին է, որ որոշ քաղաքական ուժեր ուղղակի պարտաւոր են միաւորուել եւ գաղափարական հենքի վրայ ստեղծել նոր ճակատ»,- նշեց նա: Ըստ Կարապետյանի՝ ոչ միայն պարտադիր չէ, որ այդ ճակատը ձեռնարկի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար, այլեւ՝ անհրաժեշտ է, որ դրա ձեռնարկման հիմքում դրուի ուղղակի գաղափարական ընդհանրությունը:

«Ես յատուկ նշեմ՝ դաշինք ձեռնարկում են ուժեղ կուսակցությունները, որոնք, ինչպէս մենք, խորհրդարանական տեղերի խնդիր չունեն, եւ նման փոքր նպատակներ չեն հետապնդում: Իսկ յետոյ այդ դաշինքներին միացող առաւել թույլ ուժերը կարող է եւ ունենան անձնական եւ քաղաքական նպատակներն այս միջոցով իրագործելու ծրագրերը»,- ասաց նա:

«Նոր ժամանակները», ըստ կուսակցության նախագահի, գա-

**«ԲԱՅ ԴՈՆԵՐԻ» ՕՐԵՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝  
ՄԱՐՏԻ 1-Ի ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հայաստանի գլխավոր դատախազ Ադուան Յովսեփեանը յանձնարարել է 2008 թուականի Մարտի 1-2-ի իրադարձությունների առնչությամբ յարուցուած քրէական գործը քննող քննչական խմբի ղեկավարին եւ քննիչներին իւրաքանչիւր ամիս հանդիպել լրատուամիջոցների ներկայացուցիչների հետ:

Ինչպէս տեղեկացնում է Գլխավոր դատախազության լրատուական ծառայությունը, յանձնարարականի նպատակը Մարտի 1-ի գործով հնարաւոր նոր պայցոյցներ եւ փաստերի յայտ բերելը եւ նախաքննական մարմնի կատարած աշխատանքների մասին հասարակութեանը տեղեկացնելն է:

**«ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԴԵՌ ՇԱՏ ՋՐԵՐ ԿԸ ՀՈՍԵՆ»**

ՀՀԿ-ի յարաբերությունները կուսակցություն գործընկերների հետ բարձր մակարդակի վրայ են: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մայիսի 16-ին յայտարարեց Աժ ՀՀԿ խմբակցության պատգամաւոր Գազիկ Մելիքեանը՝ անդրադառնալով ԲՀԿ-ի կազմակերպած՝ գիտնականների մասնակցությամբ տեղի ունեցած հաւաքին: Նա նշեց, որ չի կարծում, թէ կուսակցություններն արդէն որոշել են, թէ ինչպէս է մասնակցելու առաջիկայ խորհրդարանական ընտրություններին: Դիտարկմանը, թէ ԲՀԿ-ն արդէն յայտարարել է, որ ընտրություններին մասնակցում է առանձին ցուցակով, Մելիքեանն արձագանքեց. «Շատ էլ լաւ ա արել, որ

դափարական ընդհանրութեամբ կարող է միաւորուել «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Ժառանգություն», Սոցիալ-դէմոկրատ հնչակեան, ինչպէս նաեւ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունների հետ: «Կարելոյն այն է, որ դա պիտի լինի ազգային դաշինք՝ այն չի ձեռնարկուելու ուղղակի ընտրություններին մասնակցելու համար, ինչ-որ ժամանակաւոր քաղաքական խնդիրներ լուծելու համար: Այն նորովի բարձրացնելու է թէ արտաքին, թէ ներքին խնդիրներ՝ արդիւնաբերութեան զարգացումից սկսած մինչեւ հայ-թուրքական յարաբերություններ եւ Լեւոնալին Ղարաբաղի հարցի կարգաւորում»,- նշեց Արամ Կարապետյանը:

«Կարծում եմ՝ դեռ վաղ է խօսել համագործակցության աւարտուն պայմանաւորությունների մասին: Նման որոշումներ կ'ընդունուեն, թերեւս, ամառուայ վերջում կամ աւելի ուշ»,- ասաց Արամ Կարապետյանը:

Մարտի 1-ի գործով «բաց դռներին» կարող են մասնակցել Հայաստանի տարածքում գործող բոլոր լրատուամիջոցների ներկայացուցիչները եւ հնչեցնել իրենց յուզող հարցերը՝ բացառապէս նշուած քրէական գործի հանգամանքների շուրջ:

«Բաց դռների օրուայ» հանդիպումները կը կայանան իւրաքանչիւր ամսուայ առաջին եւ վերջին շաբաթուայ Չորեքշաբթի օրերին՝ ժամը 12.00-ին: Առաջին հանդիպումը կը կայանայ Մայիսի 25-ին:

Նշեց, որ Փետրուարի 17-ին Հայաստանի երեք իշխող կուսակցությունները կուսակցություն նոր յուշագիր են ստորագրել, որով ամրագրել են 2012 թուականի խորհրդարանական ընտրություններին միասնաբար հանդէս գալու եւ 2013-ի նախագահական ընտրություններին երկրի գործող նախագահին աստարելու գրոյթները:

**ԼԵԻՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆ.-  
«ԵԹԵ ՄԻՆՉԵՒ ՄԱՅԻՍԻ 31-Ը ՆԻԿՈՆՆ ՈՒ  
ՍԱՍՈՒՆԸ ԱԶԱՏ ՉԱՐՁԱԿՈՒԵՆ, ՉՍԿԱՌԻԱԾ  
ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՂԱՐԵՑՈՒԻ»**

Հայ ազգային կոնգրէսն Մայիսի 17-ին նոր գրասենեակ է բացել Շիրակի մարզի Արթիկ քաղաքում:

«ՀԱԿ-ի գործերը հիմա շատ լաւ են»,- Արթիկում գրասենեակի բացման ժամանակ լրագրողների հետ զրոյցում յայտարարել է ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբեանը, նշելով, որ ՀԱԿ-ն արդէն աւելի քան 40 գրասենեակ ունի, որոնցից իւրաքանչիւրը տուեալ բնակավայրում ընդդիմադիր ճակատի կենտրոնական գրասենեակն է համարուած:

«Կոչ եմ անում այս տարածաշրջանում էլ ձեռնարկել կուսակցությանը», - ասել է Լեւոն Զուրաբեանը՝ չբացառելով, որ ՀԱԿ-ը պատրաստուած է արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների: Ըստ Զուրաբեանի՝ ինչքան աւտիւս լինեն, այնքան աւելի կը մօտեցնեն իշխանափոխություն օրը:

«Քաղաքացիները մեզ յաճախ են հարցնում. «Կարո՞ղ է կոնգրէսը հրաժարուի արտահերթ

ընտրությունների գնալու մտքից»:- Դա բացառուած է»,- ընդգծել է ՀԱԿ համակարգողը:

Արթիկցիների այն նկատաւմանը, թէ երկխօսութիւն է սկսուել իշխանութիւնների եւ ՀԱԿ-ի միջեւ, նախկին քաղբանտարկեալ, ազատամարտիկ Միասնիկ Մալխասեանը պատասխանել է. «Շան հետ ընկերութիւն արա , փայտը ձեռքիցդ մի գցի արտայայտութիւնը լաւ ենք յիշում»:

Ներկաներին բաժանուել են ՀԱԿ-ի թուրքիկներ, որոնցում նախագահ արդէն նշուած է, որ Մայիսի 31-ի հանրահաւաքում նախատեսուած են քաղբանտարկեալներ Սասուն Միքայէլեանի եւ Նիկոլ Փաշինեանի ելոյթները:

Վստա՞հ են արդեօք կոնգրէսի ներկայացուցիչները, որ իսկապէս Մայիսի 31-ին նրանք ազատութեան մէջ կը լինեն, հարցին Լեւոն Զուրաբեանը յայտարարել է. «Իհարկէ վստահ ենք: Եթէ ոչ, չսկսուած երկխօսութիւնը կը դադարեցուի»:

**ՏԻԳՐԱՆ ՓՈՍՏԱՆՁԵԱՆԸ ՀԱՅԱԴՈՒԷ Է  
ՅԱՅՏԱՐԱՐԵԼ**

Հայաստանի Ազգային Ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը Մայիս 16-ին նամակով դիմել է մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեանին, արդարադատութեան նախարար Հրայր Թովմասեանին եւ ոստիկանապետ Ալիկ Սարգսեանին՝ յայտնելով, որ նոյն խմբակցութեան պատգամաւոր Ջարուհի Փոստանջեանի եղբայրը՝ 86 օր կալանքի տակ գտնուող Տիգրան Փոստանջեանը, յայտարարել է հացադուլ՝ «Նուբարաշէն» քրէական տարողական հիմնարկում «անմարդկային եւ նուաստացնող վերաբերմունքի դէմ»:

«Տիգրան Փոստանջեանին պահում են շուրջ 25 քառակուսի մետր բանտախցում, որտեղ գտնուում են եւս 18 կալանաւոր: Կալանաւորները քնում են հերթափոխով, տարատեսակ խալթով միջատների առատութիւնից կալանաւորները ստիպուած են քնել հագուստով: Ծխող եւ չծխող կալանաւորները պահուում են նոյն բանտախցում: Միջատների խալթոցները առաջացնում են ծանր ալերգիա, դրանց դէմ պաշարի քիմիական նիւթերն

էլ իրենց հերթին անհնար են դարձնում շուրջ 25 քառակուսի մետր բանտախցում շնչելը: Բանտախցում չեն պահպանուած հիգիենայի բաւարար պայմաններ», - իր նամակում գրել է, մասնաւորապէս, Ստեփան Սաֆարեանը՝ պահանջելով «միջոցներ ձեռնարկել վերացնելու ապօրինութիւնները»:

«Ժառանգութիւն»-ից տեղեկացնում են նաեւ, որ Ջարուհի Փոստանջեանը, իր հերթին, խնդրի վերաբերեալ ահազանգել է Եւրոպայի խորհրդին:

Արաբկիրի թաղապետարանի առաջատար մասնագետ Տիգրան Փոստանջեանը ձերբակալուել է Փետրուարի վերջին՝ 100 հազար դրամ (շուրջ 270 դոլար) ապօրինի վարձատրութիւն ստանալու կասկածանքով: Գործը քննում է Ազգային անվտանգութեան ծառայութիւնը, որի պնդմամբ էլ դատարանը բաւարարել է Փոստանջեանին կալանելու միջնորդութիւնը:

**«ԻՐԱԲԱՊԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՇԽԱՏԻՆ ՈՉ  
ԹԵ ԸՍՏ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ, ԱՅԼ ԳՈՅՈՒԹԻՒՆ  
ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԻ»**

Հելսինքեան քաղաքացիական ասամպլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց մեկնաբանելով Սերժ Սարգսեանի վերջերս տուած յանձնարարականը, ըսած է.-

«Նախագահի 1 Մարտի դէպքերը բացառապէս յանձնարարականը բաւական տարօրինակ է, քանի որ իրաւապահ մարմինները պէտք է աշխատին ոչ թէ ըստ յանձնարարութեան, այլ գոյութիւն ունեցող փաստին: Այս յանձնարարականը ցոյց կու տայ, որ մեր իրաւական համակարգի գործունէութիւնը պայմանաւորուած է ոչ թէ օրէնքով, այլ քաղաքական գործընթացներով: Այսպիսով՝ քննար-

կելով իրաւական գործընթացները՝ պէտք է դուրս գալ իրաւական դաշտէն եւ նշել, որ իշխանութիւններու վարքագծի փոփոխութիւնը պայմանաւորուած է կամ գալիք ընտրություններով, կամ ներքին եւ արտաքին ճնշումները այնքան ուժեղացած են, որ իշխանութիւնները այլընտրանք չունին: Երկու պարագային ալ պատկերը յուսադրող չէ, քանի որ փաստ է, որ իրաւական բնոյթի խնդիրներուն մէջ մեծապէս առկայ է քաղաքական գործօնը: Ասիկայ ցոյց կու տայ, որ Հայաստանի մէջ յանցագործութիւնները կը կոծկուին կամ կը բացառապէս չհրահանգուի»:

ԼՈՒՐԵՐ

AMNESTY INTERNATIONAL-Ը ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է 2011 ԹՈՒԿԱՆԻ ԶԵԿՈՅՑԸ

Amnesty International-ը հրապարակել է 2011 թվականի գեկոյցը: 400-էջանոց փաստաթղթում ներկայացված է մարդու իրավունքների վիճակը 157 երկրներում: Զեկույցն ընդգրկում է 2010 թվականի տեղեկությունները:

Amnesty International-ի գեկոյցում ներկայացված է մարդու իրավունքների խախտումների հինգ կատեգորիա՝ «Մահուան դէպք ուստիկանութեան բաժանմունքում», «Անպատժելիութիւն», «Խօսքի ազատութիւն», «Բռնութիւն կանանց եւ աղջիկների նկատմամբ» եւ «Խղճի բանտարկեալներ»:

Հայաստանին վերաբերող բաժնում «Մահուան դէպք ուստիկանութեան բաժանմունքում» կատեգորիայում նշուած է, որ Սեպտեմբերին Հայաստան կատարած այցի ընթացքում քրէակատարողական հիմնարկներում կամայականութիւնների դէմ պայքարի հարցով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը մտահոգութիւն է յայտնել ձերբակալուածների եւ բանտարկեալների նկատմամբ բռնութիւններ գործադրելու փաստերի կապակցութեամբ:

2010 թվականի Ապրիլին Չարենցաւանի ուստիկանութեան բաժանմունքում դաժան ծեծի է ենթարկուել եւ մահացել է գողութեան կասկածանքով բերման ենթարկուած վահան խալաֆեանը: Իշխանութիւնները նախ փորձել են դէպքը ներկայացնել որպէս ինքնասպանութիւն, սակայն Նոյեմբերին երկու ուստիկաններ դատապարտուել են խալաֆեանին բռնութեան միջոցով ինքնասպանութեան հասցնելու համար, նշում է հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը:

«Անպատժելիութիւն» կատեգորիայում գեկոյցը փաստում է, որ 2010 թվականի տարեկերթի դրութեամբ այդպէս էլ անկախ քննութիւն չի իրականացուել 2008 թվականի յետընտրական հասարակական բողոքների մասնակիցների նկատմամբ անարկի ուժ կիրառելու հարցով: Ոչ ոք պատասխանատուութեան չի ենթարկուել 10 մահուան գործերով, 9 զոհերի հարազատները գլխաւոր դատախազութեանը մեղադրել են անգործունէութեամբ:



Թեան համար, սակայն բոլոր առեանների դատարանները մերժել են հայցերը:

«Խօսքի ազատութիւն» կատեգորիայում Amnesty International-ը անդրադարձել է «Հայկական ժամանակ»-ի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի 3 տարի 11 ամիս պատժամարտի նշելով, որ բանտարկեալը, ըստ հաղորդագրութիւնների, քրէակատարողական հիմնարկում յարձակման է ենթարկուել անյայտ անձանց կողմից:

«Բռնութիւն կանանց եւ աղջիկների նկատմամբ» հատուածում ասուած է, որ վարչապետի հրամանագրով ստեղծուել է միջգերատեսչական յանձնաժողով, որը կոչուած է պայքարել գենդերային բնոյթի բռնութիւնների դէմ: Հոկտեմբերին ամուսնու եւ կեսրոջ կողմից ծեծի է ենթարկուել եւ մահացել է 20-ամեայ Զարուհի Պետրոսեանը:

«Խղճի բանտարկեալներ» կատեգորիայում նշուած է, որ Հայաստանում ազատագրուած է զինծառայութիւնից հրաժարուած 73 տղամարդ:

Amnesty International-ը փաստում է, որ առնուազն 89 երկրներում սահմանափակուած է ազատ խօսքը, 48 երկրներում կան «խղճի բանտարկեալներ», 98 երկրների բանտերում եւ ուստիկանութեան բաժանմունքներում գործադրուած են բռնութիւններ, եւ 54 երկրներում տեղի են ունեցել անարդար դատաւարութիւններ:

Այս տարուայ Մայիսի 28-ին հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւնը նշում է հիմնադրման 50-ամեակը:

«ԿՐՕՆԱՓՈՒՆ ՀԱՄՇԷՆԱՐԱՅԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՐՑՈՎ ԲԱՐՁՐԱՑՈՒԱԾ ԱՂՍՈՒԿԸ ԿՐՆԱՅ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ՅԱՌԱՋԱՑՆԵԼ»



Համշէնահայեր իրենց ազգային տարագով

Օրերս Ռուսաստանի հայերու «Երկրամաս» թերթը գրած էր, որ Խրիւրզիստանի մէջ ապրող համշէնահայերու ընտանիքներ ցանկութիւն յայտնած են բնակութիւն հաստատել Լեռնային Ղարաբաղի մէջ:

«Համշէն» հայրենակցական-բարեգործական հ/կ փոխնախագահ, «Ձայն Համշէնական» ամսաթերթի գլխաւոր խմբագիր Սերգէյ Վարդանեան Tert.am-ի հետ զրոյցի ընթացքին նշեց, որ կրօնափոխ համշէնահայերու հայրենադարձութեան նախաձեռնութիւն եղած է նաեւ 1984ին:

Սերգէյ Վարդանեան պատմեց, որ խորհրդային տարիներուն եւս Խրիւրզիստանի կրօնափոխ համշէնահայերը կը փափաքէին բնակութիւն հաստատել Հայաստան: «Նրանք, ի հարկէ, կ'ուզէին գնալ Աճարիա, որտեղից աքսորուել էին 1944-ին, սակայն վրաստանը նրանց չէր ընդունում», - նշեց ան:

Ներկայացնելով Խրիւրզիստանի համշէնահայերու համայնք իր այցելութիւնը, ան նշեց, որ վերադարձի նախաձեռնութիւնը ներկայացուցած էր պատկան մարմիններուն եւ լրատուամիջոցներուն խնդրած էր պահպանել խոհեմ լուծութիւն՝ գործին չխոչընդոտելու եւ այդ մարդկանց՝ իրենց տարածքին աւելորդ հարուածի տակ չզննելու համար: Սակայն հասարակութեան լայն շրջանակներու մէջ կը քննարկէին վերադարձի այնպիսի մանրամասներ, ինչպէս՝ Երեւանի մէջ անոնց համար մզկիթ կառուցելը եւ այլն: «Ասում եմ՝ նրանք այնտեղ էլ շատ գիւղերում մզկիթ չունեն: Դէ, Խորհրդային Միութիւն էր՝ եկեղեցիները, մզկիթները շատ տեղերում արգելուած էին, իսկ այստեղ շարունակում էին քննարկել հաւանական եւ անհաւանական վարկածներ: Յանկացած գործ, երբ դեռ չեն արել, բարոյական իրաւունք չունեն այդ մասին յայտարարել», - ըսաւ Սերգէյ Վարդանեան: Ըստ Վարդանեանի՝ հնարաւոր չէ կանխատեսել, թէ Խրիւրզիստանի համշէնահայերէն քանի հոգի պիտի կամենայ վերադառնալ, քանի որ կան նաեւ խառն ամուսնութիւններով ընտանիքներ, եւ դժուար է ընտանիքի կէսը ձգել բնակութեան վայրը եւ այլն: Անոնց մէկ մասի ազգականները կը բնակին Քրասնոտարի, Ռոստովի եւ Վորոնէժի մարզերուն մէջ եւ ոմանք կը փափաքին այնտեղ մեկնիլ: «Մարդիկ 1944-ից՝ այսինքն արդէն եօթ տասնամեակ ապրում են Խրիւրզիստանում եւ տուն-տեղ թողնել-գալը բոլորի համար հեշտ չի լինի: Բայց արդէն իսկ յայտարարուած է հնարաւոր ամենամեծ թիւը՝ 200 ընտանիք. այնտեղ հենց այդքան կրօնափոխ համշէնահայ ընտանիք կայ, եւ յայտարարուած է, թէ նրանք գալիս են: Իսկ բարձրացուած այս աղմուկից յետոյ, բնականաբար, այնտեղ կ'ընկնեն նրանց տների գները, գոյքը դժուար կը լինի վաճառել, մարդիկ իրապէս կը կանգնեն խնդիրների առաջ», - նշեց ան:

Սերգէյ Վարդանեան շեշտեց, որ չըրած գործի շուրջ բարձրացուած այս աղմուկէն արդէն իսկ հասցուցած է օգտուել Ատրպէյճանի իշխող կուսակցութիւնը՝ նամակ յղելով ԵԱՀԿ համանախարհագրաներուն, թէ Հայաստան կը փորձէ վերաբնակեցնել «գարաւալ տարածքները»: Ան ըսաւ, որ թուրքերի արդէն քանի տարի է՝ Արեւմտեան Հայաստանի տարածքին կը բնակեցնէ Միջին Ասիայէն ու Աֆղանիստանէն հրաւիրուած տարբեր ազգութիւններու տասնեակ հազարաւոր ներկայացուցիչներու, բայց այդ մասին ոչ մէկ աղմուկ չի բարձրացնել:

Յիշեցնենք, որ օրեր առաջ Tert.am-ի հետ զրոյցի մը ընթացքին՝ թրքագետ Ռուբէն Մելքոնեան կարծիք յայտնած էր, որ Հայաստան պէտք է օգտագործէ համշէնահայերու հայկական արմատներուն վերադառնալու ցանկութիւնը, անոնց մէջ ազգային ինքնագիտակցութեան զարթոնքը եւ վերաընդունուածը հայութեան հետ:

Յիշեցնենք, որ օրեր առաջ Tert.am-ի հետ զրոյցի մը ընթացքին՝ թրքագետ Ռուբէն Մելքոնեան կարծիք յայտնած էր, որ Հայաստան պէտք է օգտագործէ համշէնահայերու հայկական արմատներուն վերադառնալու ցանկութիւնը, անոնց մէջ ազգային ինքնագիտակցութեան զարթոնքը եւ վերաընդունուածը հայութեան հետ:

ԴԱՏԱՐԱՆԸ 21 ՕՐ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն

գրաւուած այս տարածքները օգտագործուած են շահոյթներ ստանալու համար», - ըսած է Վարդգէս Եղիաեան: Դատը ներկայացուած է ցե-

ղասպանութեան զոհերու երեք ժառանգորդներու՝ Ալէքս Պաքալեանի, Անայի Յարութիւնեանի եւ Ռիդա Մահսեանի անունով, սակայն ըստ փաստաբանի, հետագայում դատին կրնան միանալ տասնեակ այլ ամերիկահայեր եւս:

ԱԺ ՊԱՏԳԱՄԱԻՐ ՉԻ ՀԱՄԱԿԵՐՊԻՈՒՄ «ԵՐԱՏԵՍԻԼ-2011»-ՈՒՄ ԱՏՐՊԵՅՃԱՅՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՀԵՏ

Իշխող Հանրապետական կուսակցութեան անդամ, ԱԺ պատգամաւոր Գագիկ Մելիքեանը ցաւալի է համարում «Եւրատեսիլ-2011» երգի մրցոյթում Հայաստանը ներկայացնող երգչուհի Էմմիի անյաջողութիւնը: Այս մասին Մայիսի 16-ին նա ասել է լրագրողների հետ հանդիպման ժամանակ: ՀՀԿ-ական պատգամաւորը նաեւ ոչ մի կերպ չի համակերպուած այդ մրցոյթում Ատրպէյճանի յաղթանակի հետ:

«Յատկապէս Ատրպէյճանի յաղթանակը ես երբեք չեմ ողջունում», - յայտարարեց Մելիքեանը:

NEWS.am-ի ճշմանը, թէ ինչո՞ւ չի ողջունում, Մելիքեանը արձագանքեց. «Որ Ատրպէյճանն է, դրա համար էլ չեմ ընդունում: Ուզում էք ինձ անմարդկային անուանէք, ուզում էք ոչ ժողովրդավար անուանէք, ոչ չեմ ընդունում», - յայտարարեց նա:

Գ. Մելիքեանը նաեւ կողմ

արտայայտուեց լրագրողներից մէկի առաջարկին, որ «Եւրատեսիլ» մրցոյթում Հանրային հեռուստատեսութեան գործունէութիւնը, որը ֆինանսաւորուած է պետական միջոցներով, պէտք է քննարկուի խորհրդարանի մակարդակով: Ըստ այդմ՝ պէտք է յստակեցուեն «Եւրատեսիլում» ներկայացուող երգի, երգչի եւ մասնակցութեան հետ կապուած մի շարք հարցեր:

Նշենք, որ «Եւրատեսիլ-2011» մրցոյթում այս տարի յաղթեց Ատրպէյճանը՝ երգչուհի էլզար Գաւիմովի եւ Նիգեար Զամալի «Running Scared» կատարմամբ: Իսկ Հայաստանը ներկայացնող Էմմին Մայիսի 11-ին տեղի ունեցած «Եւրատեսիլ-2011»-ի առաջին կիսաեզրափակչում պարտութիւն կրեց եւ չանցաւ եզրափակիչ փուլ: «Եւրատեսիլ-2012»-ը, ըստ կարգի, տեղի կ'ունայ այս տարուայ մրցոյթում յաղթանակ տարած երկրում՝ Ատրպէյճանում:

## «ԳԵՇ ՊՈԼԻՏԻԿԱ» ԵՒ ՌԵԱԼ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**ԼՈՒՍԻՆԷ ԽԱԶԱՏՐԵԱՆ**  
Ստամբուլ

Թրքական «Taraf» օրաթերթի սիւնակագիր Մարգար Եսայեանը առանց ղարաբաղեան հարցի լուծման հայ-թրքական յարաբերութիւններն ու սահմանի բացումը ապագայում հնարաւոր է համարում:

«Թուրքիան Հայաստանի հետ յարաբերութիւնները երրորդ երկրի հետ կապելով եւ չվաւերացնելով հայ-թրքական արձանագրութիւնները՝ իրականում շատ գէշ պոլիտիկա ընտրեց», - երէկ «Առաւօտի» հետ հանդիպման ժամանակ նման կարծիք յայտնեց թրքական «Taraf» օրաթերթի սիւնակագիր, գրող Մարգար Եսայեանը: Նա նաեւ Յունիսի թուրքալուծ կայանալիք խորհրդարանական ընտրութիւններին վարչապետ էրդողանի ղեկավարած AKP-ի կողմից նախապէս հայ թեկնածու էր առաջադրուել: Ըստ Մ. Եսայեանի, Հայաստանը թուրքալուծ հետ բանակցութիւններից յոգնելու ու խաբուած զգալու իրաւունք ունի, բայց գտնում է, որ քաղաքականութեան մէջ պէտք է ռեալիստ լինել: «Այստեղ թուրքալուծ վստահելու կամ չվստահելու հարցը է: Հայաստանի համար սահմանը բանալը անպայման պէտք է, բայց առանց նախապայմանների: Հայաստանը, զգացումներից հեռու մնալով, պէտք է իր շահերից բխելով քայլեր ձեռնարկի: Թուրքիան էլ պէտք է ջանայ նորից թեատ անել: Ձենք կարող ասել, որ թուրքալուծ հետ յարաբերութիւն չենք կարող ունենալ, որովհետեւ աստիճանայ մարդիկ են»: Մ. Եսայեանի կարծիքով՝ արձանագրութիւնների տապալման հիմնական պատճառն Ատրպէյճանի ճնշումներն էին: «Այդ երկրի թուրքալուծ մեծ ուժ ունի: «Էրգենեկոնի» հարցի մի լուրջ կողմն էլ Ատրպէյճանի մէջ է, եւ դա եւս ազդեցութիւն ունի, կան նաեւ նաւթի, գազի հարցեր, այս ամէնը քով քովի եկաւ, եւ թուրքիան մտածեց՝ այսքան ժխտական բանի կողքին Հայաստանի հետ սահմանը բացելով, մեծ բան մը չպիտի շահենք: Ես քուէ, պետրոլ, գազ պէտք է կորսնցնեմ, ինչ է թէ՛ պատիկ երկրի հետ յարաբերութիւն ունենամ, չնայած սիմվոլիկ գործօնը մեծ է: Եթէ թուրքիան այդ խնդիրը լուծի, շատ մեծ պրեստիճը կայ, բայց այդ դեմոկրատիկ քաջութիւնը չկրցաւ ընել», - մեզ հետ զրոյցում նշեց նա: Հարցին՝ առանց ղարաբաղեան հարցի լուծման հնարաւոր համարում է հայ-թրքական սահմանի բացումն ու յարաբերութիւններն ունենալը, Մ. Եսայեանը պատասխանեց՝ այո՛, որովհետեւ վստահ է, որ Արցախի հարցը ղժուար թէ մօտ ժամանակներս լուծում ստանայ, իսկ թուրքիան էլ գիտի, որ կիպրոսի, հայկական, քրտական եւ այլ խնդիրներով չի կարող աւելի ուժեղ, ժողովրդավարական երկիր կառուցել, եւրամիութեանը անդամակցել եւ այլն: Մեր գրուցակիրը ենթադրում է, որ Յունիսի 12-ին թուրքալուծ կայանալիք խորհրդարանական ընտրութիւններից յետոյ հայ-թրքական սահմանի բացման հարցին թուրքիան նորից կանդիդատանայ: «Ընտրութիւններէն վերջը, եթէ AKP-ն կարողանայ 150% քուէ առնի, անկէ վերջը նորից պէտք է



հանգստանան, եւ քիւրտի եւ հայի հարցը նորէն կը վերադառնայ: Անձամբ AKP-ի այս քաղաքականութիւնը չեմ հաւանում, բայց հասկանում եմ: Թուրքիան վերջին տասը տարուայ մէջ բաւական փոխուեց, թուրքալուծ մէջ ռեժիմը կը փոխուի: Ես հոս ծնած եմ, մենք ինչ գէշ օրեր անցուցինք հոս, մեր հայ ըլլալն անգամ չէինք կարող ըսել, սաստիկ ճնշումի տակ էինք, հիմա ես կը գրեմ ամէն բան, հեռուստատեսութեամբ ելոյթներ կ'ունենամ: Դեմոկրատիկ քայլ մը նետուած է, եւ ասիկա արժէքաւոր բան մէ, որովհետեւ գիտեն, որ տնտեսապէս եւ քաղաքական առումով հզօր լինելուց բացի՝ կարելի է դեմոկրատ լինելը»:

Նրա փոխանցմամբ, էրդողանի «Արդարութիւն եւ զարգացում» (AKP) կուսակցութիւնը պրագմատիկ, դեռեւս ոչ ժողովրդավար, բայց ապագայում այդպիսին լինելու մտադրութիւն ունեցող կուսակցութիւն է: Ըստ նրա, թուրքիայում այսօր շատ են ազգայնականները, ինչի պարագայում, չնայած ցանկութեանը, հայկական հարցը լուծելը դիւրին չէ: «Թուրքիայի կառավարութիւնը սխալ է վարուել, որ մինչեւ այժմ ունի հայկական, քրտական, ալեւիների հարց, բայց հայերի եւ քրտերի վերաբերեալ բոլոր նախաձեռնութիւնների դէմ խորհրդարանի մնացած կուսակցութիւնները բաւականին զօրաւոր, գէշ լեզուով բողոքեցին, որից էրդողանը վախեցաւ: Միւս կողմից, դեմոկրատ լինել կ'ուզեն, բայց նաեւ թուրք են եւ ազգայնամուլ»:

Ինչ վերաբերում է Յունիսի կայանալիք ընտրութիւններին ոչ մի հայ թեկնածու չառաջադրուելուն, Մ. Եսայեանը գտնում է. «Ասիկա մեծ ամօթ է թուրքիայի համար, այս ընտրութիւններու կը սպասէինք, որ մէկ-երկու հայ պէտք է մտնէր խորհրդարան: Հայ թեկնածու ունենալը պրեստիճ պէտք է լինէր, բայց անոր քաջութիւնը տակաւին չունին: AKP-ն ասիկա անել կ'ուզէր, բայց այս ընտրութիւնները բաւական սուր կ'երթան՝ ազգայնամուլական գաղափարախօսութեամբ: AKP-ի ամենամեծ յանցանքը սա է, ազգայնամուլութիւնն է չի կրնար ազատիլ եւ կը վախնայ, որ ժողովուրդէն քուէ պիտի կորսնցնէ, եթէ հայ մը թեկնածու անցնէ: Եթէ թեկնածու լինէր, շատ լաւ բան մը կը լինէր, թուրքերը մեզ պարտք ունեն անցյալէն, որովհետեւ եթէ մենք այս»

Շաբ.բ էջ 19

## ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԳՏՆՈՒՈՂ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆՈՅԸ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԵԼ Է

**ՀԵՂԻՆԷ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ**

Պոլսոյ Հայոց պատրիարքարանն ու թուրքիայի տեղական իշխանութիւնների համատեղ ջանքերով նորոգուել են Սիվաս նահանգում՝ նախկին Սեբաստիայում գտնուող միջնադարեան հայկական գերեզմանոցը:

Թրքական Hurriyet Daily News-ի փոխանցմամբ, հարիւրաւոր հեկտարների հասնող գերեզմանատունը հիմնադրուել է 1061 թուականին եւ մինչ օրս մեծ նշանակութիւն ունեցել հայերի համար:

«Ամրան ամիսներին աշխարհի տարբեր անկիւններից բազմաթիւ հայեր էին գալիս այստեղ, սակայն գերեզմանոցը այնքան վատ վիճակում էր, որ այցելուներից շատերը դառնութեամբ էին հեռանում», - թերթին պատմել է նահանգի հայկական համայնքի ղեկավար Մինաս Դուրմազգիւլը, ով նախաձեռնել ու ղեկավարել է պատմական այս վայրը նորոգելու ծրագիրը:

Շինարարական ծախսերի 70 տոկոսը վճարել են թրքական տեղական իշխանութիւնները, 30 տոկոսը՝ պատրիարքարանն ու հայ համայնքի ներկայացուցիչները: «Գերեզմանատունը շատ վատ

վիճակում էր, բազմաթիւ անգամ յարձակումների էր ենթարկուել գողերի եւ թանկարժէք իրեր որոնողների կողմից», - ասել է Սիվասի նահանգապետ Դոդան Ուրգիւլը՝ յաւելելով. - «Վերանորոգման բոլոր աշխատանքները կատարուել են քրիստոնէական ավանդութիւնների համաձայն Պոլսոյ պատրիարքարանի օգնութեամբ: Մասնաւորապէս, վերականգնուել են տապանագրերը, նոր ծառեր են տնկուել ու ճանապարհներ կառուցուել»:

Անդրադառնալով ծրագրին՝ թրքական թերթը փաստում է, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու նորոգումից յետոյ թրքական իշխանութիւնները վերականգնողական աշխատանքներ են սկսել բազմաթիւ այլ հայկական եկեղեցիներում ու վանքերում եւս: Սակայն Սիվասի նահանգապետը պնդել է, թէ իրենց նախաձեռնած ծրագիրը որեւէ կապ չունի այդ զարգացումների հետ:

«Մեր նպատակն էր վերականգնել նահանգի պատմական դէմքը», - ասել է Դոդան Ուրգիւլը՝ հաւաստիացնելով, թէ հայկական գերեզմանատունը կը նորոգէր նաեւ 10 տարի առաջ, եթէ այն ժամանակ ընտրուէր նահանգի ղեկավարի պաշտօնում:

## ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ ԼՂ ԽՆԴԻՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԳԱՒՈՐՈՒԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԻ ԶԿԻՐԱՌՄԱՆ ԵՒ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՅԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

«Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ հակամարտութեան վերաբերեալ եւս այն համոզմանն է եղել, որ յարատեւ խաղաղութեան հաստատման համար այն պէտք է կարգաւորուի երկխօսութեան, ռազմական որեւէ ուժի չլիարձան եւ ինքնորոշման իրաւունքի չարգման միջոցով», - նման չափաւորութեամբ հանդէս է եկել Հայաստանում իրանի դեսպանատունը, միաժամանակ ընդգծելով՝ եւ քանի որ իրանի իսլամական Հանրապետութիւնը միակ երկիրն է, որը հակամարտութեան գոտու հետ ունի ընդհանուր սահման, ուստի ցանկացած հրահրման եւ այս տարածաշրջանում լարուածութեան ստեղծման առնչութեամբ յայտնում է իր մտահոգութիւնը եւ թոյլ չի տալիս, որ նման հրահրումները տարածաշրջանում օտար ուժերի ներկայութեան առիթ դառնան:

Դեսպանութեան տարածած յայտարարութեան մէջ նաեւ ասուած է. «Երեւանում իրանի իսլամական Հանրապետութեան դեսպանութիւնը մէկ անգամ եւս շեշտում է, որ իի՛շ պաշտօնական դիրքորոշումը արտաքին քաղաքականութեան բոլոր խնդիրները վերաբերեալ արտայայտուած է մեծարգոյ նախազգիտ, արտաքին գործերի նախարարի եւ ԱԳՆ խօսնակի կողմից, ուստի լիշատակուած չըջանակից դուրս արտայայտուած ցանկացած տեսակէտ համարուած է անձնական մօտեցում:

Դեսպանութիւնը յայտնում է, որ իի՛շ արտաքին քաղաքականութիւնը տարածաշրջանային բոլոր հակամարտութիւնների վերաբերեալ հիմնուած է եղել կողմերին երկխօսութեան հրաւիրելու եւ հակամարտութիւնները կարգաւորելու եւ տարածաշրջանում խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու ուղղութեամբ միջնորդական ջանքերը սատարելու վրայ, եւ Տաճիկստանի, Աֆղանստանի ու իրաքի ներքին հակամարտութիւնների կարգաւորման ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը դրա վկայութիւնն է»:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor

**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախանկներու և մանուկներու Թարափորաբար բուժում:  
Գլխացու, վզի, մէջքի, բոզային և սկզբնային ցուեր:  
Ինքնաշարժի վթարի նետանքով պատահած վնասումներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ՈՐՔԱՆ ՅԵՌՈՒ ԿԸ ՏԱՆԻ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՉԵՐՔԵԶԱԿԱՆ ԽԱՂԱՔԱՐՏԻ ԳՐՈԾԱՐԿՈՒՄԸ

## ՍԱՐՕ ՍԱՐՈՑԵԱՆ

Վերջին օրերին Վրաստանի խորհրդարանի օրակարգում է յայտնուել չերքեզների նկատմամբ Ռուսաստանի իրականացրած ցեղասպանությունների և ճանաչման հարցը: Մայիսի 21-ին ընդառաջ, որը Ռուսաստանի Դաշնությունում, Թուրքիայում, Սիրիայում, Յորդանանում, Իսրայելում եւ այլ վայրերում բնակվող չերքեզների շրջանում ճանաչում է որպես չերքեզ գոհների յիշատակի օր, նման հարցի քննարկումն ու որոշման կայացումը նոր սրացումներ են խոստանում առանց այդ էլ ուսուցողական բարդ յարաբերություններում: Վրաստանի խորհրդարանի կողմից եւ հայրենակիցների հարցերով կոմիտեում լսումները կատարված են թողնում, որ վրացական իշխանությունների կողմից քաղաքական որոշում է կայացուցել չերքեզների ցեղասպանության հարցը վերջնականապես ներառել Վրաստանի կոնվենան քաղաքականության հիմքում:

19-րդ դարում կոնվենան հպատակեցնելու համար ցարական Ռուսաստանի ձեռնարկած ռազմական գործողությունները ծանր հետեւանքներ ունեցան չերքեզների համար: Կոնվենան պատերազմի արդյունքում, որը տեւեց մօտ կես դար եւ աւարտուեց 1864 թվականին, ոչնչացուեցին կամ բռնի տեղահանուեցին չերքեզական բազմաթիւ բնակավայրեր, իսկ չերքեզ ժողովրդի մի մասն էլ ստիպուած եղաւ արտագաղթել Օսմանեան կայսրութիւն:

Դեռեւս 1994թ. Մարտ ամսին ՌԴ Կարաչաեւ-Չերքեզիայի հանրապետութեան նախարարների խորհրդի նախագահութիւնը որոշում էր կայացրել կոնվենան պատերազմի գոհների յիշատակի օր սահմանել Մայիսի 21-ը: 1864թ. հենց այդ օրը Սոչիի մօտ գտնուող ներկայիս Կրասնայա պոլյանա վայրում տեղի ունեցաւ կոնվենան պատերազմի աւարտի կապակցութեամբ անցկացուած ռուսական զօրքերի գորահանդէսը:

2010թ. սկզբին Չերքեզական միջազգային կոնգրեսը նամակով դիմել էր ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւին՝ խնդրելով չերքեզ ժողովրդի խորհրդանիշները յիշատակել 2014թ. Սոչիի օլիմպիական ժամանակ այնպէս, ինչպէս Վանկուվերի օլիմպիական խաղերի ժամանակ օգտագործուել էին Գանատայի բնիկների խորհրդանիշները:

ները: Դիմումի հեղինակները ենթադրում էին, որ այդ քայլը դրականօրէն կ'ազդէ չերքեզ ժողովրդի ազգային նսեմացուած զգացմունքների վրայ եւ թոյլ կը տայ օլիմպիական անցկացնել հանգիստ պայմաններում: Սակայն ՌԴ նախագահին ուղղուած այդ դիմումը որքան աննկատ մնաց Ռուսաստանում, նոյնքան սեփական քաղաքական ծրագրերի առաջնորդման համար կարեւորուեց Վրաստանում:

ՌԴ նախագահին ուղղուած դիմումից երկու շաբաթ անց՝ 2010թ. Մարտ ամսին, Թբիլիսիում անցկացուեց չերքեզական խնդրին նուիրուած միջազգային համաժողով, որը պատրաստեց մի դիմում՝ ուղղուած արդէն Վրաստանի խորհրդարանին: Համաժողովը խորհրդարանից խնդրում էր ճանաչել 19-րդ դարում Ռուսական կայսրութեան կողմից իրականացուած չերքեզ ժողովրդի ցեղասպանութիւնը:

Վրացական իշխանութիւնների ձեռնարկած յետագայ քայլերը, երբ Սեպտեմբեր ամսին Վրաստանի խորհրդարանի գարնանային նստաշրջանի օրակարգում ներառուեց նաեւ Ռուսաստանի կողմից չերքեզների նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան ճանաչման հարցը, իսկ Նոյեմբերին Թբիլիսիում տեղի ունեցաւ կոնվենան նուիրուած երկրորդ համաժողովը, վկայեցին, որ 2014թ. Սոչիի օլիմպիական ընդառաջ Վրաստանի իշխանութիւնների կողմից չերքեզական խաղաքարտի օգտագործումը Վրաստանի համար Ռուսաստանի վրա ազդելու կարեւոր քաղաքական գործիքի է վերածուում:

Աշխարհաքաղաքական շահերի ծիրում ուղարկական Գոլդոնից յետոյ չերքեզական ցեղասպանութեան ակտուալացումն այս օրերին Կրեմլի համար Արեւմուտքից եկող հերթական բարոյական հզօր հարուածի տպաւորութիւն է թողնում: Այլ երկրների համար այն կարող է ծառայել նոր մարտահրաւէրների դէմ պայքարելու՝ Ռուսաստանի ունակութիւնը որոշելու ծանրաչափ եւ ցուցանել արտաքին քաղաքականութեան մեջ Կրեմլի ներկայիս հարաւորութիւնների սահմանը: Ուստի Մոսկուան ստիպուած է քաղաքական նոր լծակներ գտնել այս ցեղասպանութեան ճանաչման յետագայ տարածումը կանխելու համար: Յատկապէս, որ դեռեւս թարմ է աշխարհի աւելի քան երկու տասնեակ երկրների



Չերքեզ ժողովրդի արտագաղթը Օսմանեան կայսրութիւն

կողմից ճանաչուած Գոլդոնի քաղաքական վնասների յիշողութիւնը:

2010թ. Ապրիլին Գոլդոնի ճանաչումը ԵՄԽՎ-ում հարաւոր եղաւ կատարել միայն Ուքրաինայի նախագահ Յանուկովիչի կողմից ուքրաինական պաշտօնական նոր դիրքորոշումը հրապարակելուց յետոյ, ով յայտարարեց, որ 1930-ական թուականներին տարածում գտած սովը չի կարելի համարել ուքրաինացիների ցեղասպանութիւն եւ այն ԽՍՀՄ կազմում եղած ժողովուրդների ընդհանուր ողբերգութիւնն է: Այս ձեւակերպումն էլ ընկաւ յաջորդ օրը ԵՄԽՎ ընդունած բանաձեւի հիմքում:

Մեծ է հաւանականութիւնը, որ այս ցեղասպանութեան ճանաչման փաստը կարող է առաւել լուրջ խնդիրների առջեւ կանգնեցնել Ռուսաստանին եւ, հետեւաբար, դառնալ 2008թ. պատերազմից յետոյ ուսուցողական քաղաքական հակամարտութեան հերթական սրացման պատճառ: Կրեմլի պատասխան քայլերի հիմքում կրկին կարող են դրուել կոնվենան ժողովուրդների խնդիրները, քանի որ առաջին հերթին հենց նոյն այդ

ժողովուրդների փոխարարբերութիւնները շահարկելու փաստով է պայմանաւորուած չերքեզների խնդրի ակտուալացումը: Պաշտօնական Վրաստանի համար դա ոչ միայն 2008թ. Յիւնիսկիի դէմ ձեռնարկած ռազմական գործողութիւնների արդիւնքում իր խախտուած դիրքերը հիւսիսկոնվենան ժողովուրդների շրջանում վերականգնելուն է ուղղուած, այլ նաեւ՝ Թուրքիայում եւ այլ երկրներում աբխազական եւ չերքեզական հարիւր հազարանոց համայնքների պառակտմանը: Երկու ազգակից համայնքներ, որոնք համատեղ գործակցութեամբ բաւական կենսունակ են գտնուել Աբխազիայի Հանրապետութեան եւ Թուրքիայի միջեւ լուռ, բայց կայուն յարաբերութիւնների հաստատման գործում եւ դրանցից մէկի ապակառուցողական դերի չէզոքացումը մեծ յաջողութիւն կը դիտուի Վրաստանի համար իր կոնվենան պատրոնած քաղաքականութիւնն իրագործելու ճանապարհին:

Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագէտ

**ArmenienInfo.net**  
News. Informationen. Kommentare.

**Bedros S. Maronian** 818/500-9585  
**Siamanto B. Maronian** 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048  
805 East Broadway Glendale, CA 91205  
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101

- Life Insurance  
- Health Insurance  
- Group & Individual  
- Long Term Care  
- Disability

- Estate Planning  
- Will & Living Trust  
- Full Annual Review  
- Mortgage Protection  
- College Planning

- Workman's Compensation  
- Employee Benefits  
- Annuity  
- IRA  
- 401K & 403B

**AAA**  
A.B.A. INSURANCE SERVICES

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ 25 ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Մարտնակուած էջ 1-էն

տիւ հանդիսութեան:

Հրաւիրեալներու շարքին կը գտնուէին Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ ընկ. Սեդրակ Աճէմեան, ինչպէս նաեւ կեդրոնի հին ու նոր անդամներ, շրջանիս վարիչ Մարմինն ու յարակից կառուցներու պատասխանատուներ:

Հնչակեան կուսակցութեան քայլերգի ունկնդրութենէն ետք՝ օրուան հանդիսավար՝ Ս.Գ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի անդամ ընկ. Թովմաս Էթարեան բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց ներկայ հիւրերն ու յատկապէս մեծարեալ ընկեր-ընկերուհիները: Այս վերջիններուն անդրադառնալով ան բարձր գնահատեց անոնց կուսակցանուէր ծառայասիրութիւնն ու անասկարկ ներդրումը ընկերային եւ ազգանուէր առաջադրանքներու իրագործումին:

Ընկերուհի Լենա Մանուկեան կարգաց կուսակցութեան 50-ամեակին առթիւ «Հնչակ»ի մէջ լոյս տեսած վահան Չուգասեանի մէկ գրութիւնը, որուն գաղափարախօսական բնոյթը պահած է իր այժմէականութիւնը:

Ս.Գ.Հ.Կ.ի Կեդր. վարչութեան նախկին անդամներէն ընկ. Տիգրան Սարաֆեան, որպէս օրուան պատգամաբեր նախ հակիրճ կերպով բնութագրեց Հնչակեան կուսակցութեան գոյաւման պատճառն ու ազգանուէր առաքելութիւնը,

մեր գոյապայքարին մէջ ծառայած հիմնահարցերու իրականացման համար: Ապա անդրադարձաւ մեծարանքի արժանացած ընկեր-ընկերուհիներու աւելի քան երեք տասնեակ տարիներու կուսակցական բեղուն եւ բոլորանուէր ծառայութիւններուն, մեծապէս սատարելով իրենց պատկանած կառուցներու վերելքին ու յառաջդիմութեան: Ընկ. Տիգրան Սարաֆեան շնորհաւորելէ ետք մեծարեալները անոնց



ընկ. Տիգրան Սարաֆեան

մաղթեց քաջաուղջութիւն եւ վերանորոգ կենսունակութիւն, շարունակելու իրենց հետեւողական աշխատանքը ի փառս հայ ժողովուրդին:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցան շրջանիս վարիչ Մարմնի ատե-

նապետ՝ ընկ. Վազգէն Խոտանեան եւ ներքին ղեկանի պատասխանատու ընկ. Կիւրեղ Մանկրեան յանձնելու համար մեծարեալներու պա-

մնաք երիտասարդ, քանի որ հոգիով երիտասարդ ենք եւ... պիտի տանք որքան որ կրնանք»:

Սոյն անմուսնալի երեկոն



տույզ գիրերը: Երբ մեծարեալները բեմ կը բարձրանային, ընկ. Տիգրան Սարաֆեան մէկ առ մէկ թուեց անոնց անունները, բնութագրելով իւրաքանչիւրի ծառայական վաստակը, արժանանալով ներկաներու երկարատեւ ծափահարութիւններուն:

25 մեծարեալ ընկեր-ընկերուհիներու անունով խօսք առաւ ընկերուհի Էօփէն Պարսումեան եւ ըսաւ. «...Այս օրը անմուսնալի կը մնայ բոլորիս համար: Հպարտութիւն է ըլլալ Հնչակեան: Պիտի

վերջ գտաւ «Տուր Ձեռքդ Ընկեր» մաղթերգով, որուն յաջորդեց ընկերային ճոխ հիւրասիրութիւն մը, գիրար շնորհաւորող հաճոյալի մթնոլորտի մէջ:

Արդարեւ, երկար ժամանակէ ի վեր այսքան մեծ թիւով կուսակցականներ մեծարանքի չէին արժանացած:

«Պատիւս արժանաւորին» Յարատեւութիւն եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք:

Գ.Մ.

### ՊԵՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒ Կ'ԱՅՅԵԼԷ ԶԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒ

Պէյրութի արւարձանները կատարած իր շրջագայութիւններուն ծիրին մէջ, Պէյրութի քաղաքապետ Պիլալ Համետ այցելեց Մըտաուար:

Շաբաթ, 14 Մայիս 2011-ի կէսօրին Պէյրութի քաղաքապետ Պիլալ Համետը, փոխ նախագահին եւ քաղաքապետութեան մընացեալ անդամներու, թաղապետներու եւ երեւելի անձնաւորութիւններու ընկերակցութեամբ այցելութիւն մը տուաւ Նոր Հաճնոյ թաղամասը:

Քաղաքապետին կ'ընկերակցէր Պէյրութի քաղաքապետութեան անդամ Արամ Մալեան:

Պիլալ Համետի պատիւրակութիւնը Նոր Հաճն թաղամասին մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ շրջանի կուսակցական պատասխանատուներուն, եկեղեցւոյ քահանային, թաղականութեան եւ ժողովուրդին կողմէ:

Ան ծանօթացաւ շրջանի բնակիչներուն, ՀԿՄ-ի դարձանատան գործունէութեան, Ս. Գէորգ եկեղեցւոյ թաղակառուութենէն եւ ժողովուրդէն լսեց



անոնց կարիքները եւ պահանջները: Քաղաքապետը խոստացաւ մօտէն հետապնդել եւ օգտակար դառնալ շրջանի բնակիչներուն կարիքներուն: Մըտաուարի շրջանը այցելութիւնը աւարտելէ ետք, քաղաքապետը այցելեց Ռատիօ Սեւան եւ ծանօթացաւ Ռատիօ Սեւանի գործունէութեան:

*Զմեպարայիս*  
**ԽՐԱԽՆՆԱՆՔ**  
*ու*  
**ՉՈՒԿԿԵՐՈՅԹ**

Կազմակերպութեամբ՝  
**ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ**  
**ՄԱՍՆԱՃԻԻՂԻ**

**Շաբաթ, 4 Յունիս 2011**  
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104



Տոմսերու համար դիմել՝ (626) 797-7680  
**ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$20.00**

### Հ.Մ.Մ.Ի ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Հ.Մ.Մ.Ի Տիկնանց վարչութիւնը այս տարի եւս նշեց իր աւանդական դարձած Մայրերու օրը՝ որ տեղի ունեցաւ Կիրակի, Մայիսի 8ին, 2011, Փաստիւնայի «612 Palm» (նախկին «Աթլանթիս») ճաշարանին մէջ:

Սրահը լեցուն էր համակիրներով, տարբեր կառույցներու պատասխանատուներով եւ անդամուհիներով: Մթնոլորտը տօնական էր: Բոլորն ալ իրենց ընտանիքներով եկած էին յարգելու սիրասուն մայրերը, մեծ մայրերն ու տիկիները, որոնք իրենց կեանքը զոհաբերելով անհուն սիրով փարած էին իրենց ընտանիքին ու մեր ազգային աւանդութեանց պահպանումին:

Տիկնանց վարչութեան ատենապետուհի Քնարիկ Պողարեան իր բացման խօսքին մէջ շնորհաւորեց ներկայ բոլոր մայրերն ու մեծ մայրերը: Ան բարձր գնահատեց հայ կնոջ գոհողութիւններն ու նուիրուածութիւնը մեր սուրբ օճախի պահպանումին եւ նոր սերունդի տոհմիկ դաստիարակութեան վսեմ գործին մէջ:

Միութեան պատասխանատու ղեկավարներէն Ծովիկ Քէօրոյլեան խօսք առնելով հանգամանօքին արտայայտուեցաւ իրական սեռի համաշխարհային շարժումին եւ յատկապէս Մայրերու Օրուան տօնակատարութեան երկրէ երկիր տարբեր թուականներուն եւ հանգրուանային շրջաններու մէջ եղած հանդիսութեանց մասին: Արդարեւ, աշխարհի զանազան երկիրներու մէջ, տարուան տարբեր ժամանակներուն կը նշուի այս տօնը՝ Մարտ, Ապրիլ կամ Մայիս ամիս-

ներուն: Միացեալ Նահանգները Մայրերու օրը սկսած է նշել մօտ 150 տարիներէ ի վեր: Աննա Ժարվէսի օրով սկսած այս տօնը ներկայիս կը նշուի ամէն տարուան Մայիսի երկրորդ Կիրակին, դառնալով այս օրերի ամենաժողովրդական տօներէն մին:

Մայրերու նուիրուած ներբողական ելոյթ մը ունեցաւ Լենա Մանուկեան:

Երեկոյի զեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին արհեստական պարողներու զոյգ մը, որոնք ներկայացուցին արժանիքներ թանկօ մը: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Հալէպահայ էսթրատային երգիչ Սազօն, որ իր նուագախումբի ընկերակցութեամբ մթնոլորտը խանդավառեց հայկական եւ արաբական պարեղանակներով, բեմահարթակը լեցուն պահելով պարող զոյգերով:

Սոյն միջոցառումի ընթացքին տեղի ունեցան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ: Իսկ վիճակահանութեան պէսպիսուն նուէրներով ուրախացան բազմաթիւ բախտաւորներ:

Զայրոյթս զսպելով եւ սրտախաբ ըսի թէ ես այս երկիրին սիրահարուած եմ եւ կապուածութիւնս արտապայտած եմ հայ մամուլին դրկած թղթակցութիւններով ու պատմուածքներով: Բայց ան անգամ կերպով նոյն պատասխանը տուաւ:

Լսած ըլլալով որ կաշառք ուսող մարդ է, դերձակ բարեկամիս դիմեցի որ ձեռք մը հագուստ կարելով, կամ համապատասխան գումարով գոհացնէր նախարարը: Բայց երեւան եկաւ որ շատ աւելի մեծ էր խորթակը: Յաջորդ հանդիպման ինքզինքս զսպելով, հարցուցի.

- Ձերդ վսեմութիւն (կամ ոչնչութիւն) ես այս երկրէն չեմ ուզեր հեռանալ, ի՞նչ խորհուրդ կը թելադրէք:

- Այդ փափաքդ միայն կայսրը կրնայ գոհացնել, պատասխանեց ան չոր ու կտրուկ, խորհելով թէ ինձի համար անկարելի է կայսրին դիմելը, հետեւաբար, աւելի սուղ կրնայ ծախել իր ծառայութիւնը:

- Շնորհակալ եմ ըսելով մեկնեցայ:

Այդ օրերուն հանդիսաւոր արարողութեան մը համար երկրին մէկ հեռավոր քաղաքը կը գտնուէր

Հայչէ Սեւասի: Եւթովպիոյ մասին գրածներս թերթերուն կցուած Եթովպերէն թարգմանութեամբ, Եթովպերէնը լաւ գիտցող բարեկամի մը հետ գացինք այդ քաղաքի կայսերական պալատը, ուր մեզի բարեկամ Ռասի մը միջնորդութեամբ ներկայացանք կայսրին: Ռասսը արաբերէն գլուխ բառն է, որ եւթովպերէնով կը գործածուի թագաւոր իմաստով եւ իբրեւ տիտղոս կը տրուի նահանգները կառավարող տասնեակ մը մեծաւորներուն: Այս թագաւորութիւններուն վրայ իշխող թագաւորաց թագաւորն էր Հայչէ Սեւասի կայսրը:

Երբ զանազան ծիսական արարողութիւններէ յետոյ վերջապէս ներկայացանք վեհապետին, ան աչքի անցուց հայերէն թերթերուն կցուած Եթովպերէն թարգմանութիւնները եւ զնահատելով զիս, ըսաւ թէ որպէս պատուաբեր մէկ գաւազան այս երկիրին՝ ցմահ հոն ապրելու իրաւունք ունիմ:

Արտաքին դուռը հասնելով մտահոգութիւն չայտնեցի, թէ երբ մայրաքաղաք հասնինք եւ ոստիկանութիւնը եթէ զիս ուզէ արտաքսել, ես ի՞նչ ապացոյց ունիմ կայսրին տուած վճիռին մասին: Մեզի ընկերացող Ռասսը ուսէս գրկելով ըսաւ, թէ հոգ չընէին, քանի որ, կայսերական հրահանգը շուտով կը հասնի առ որ անկ է: Եւ իրապէս, երկրորդ օրը ստացայ պալատական նամակ մը, որով պէտք էր ներկայանալի արտաքին գործոց նախարարին, մնայուն կեցութեանս ձեւակերպումին համար, երբ ներկայացայ նախարար Պլաթթա Տաւրտին, ան դառն ժպիտով ըսաւ.

- Ուրեմն, անցար գլխուս վրայէն:

- Ընդհակառակը, Պլաթթա՛, ձեր խորհուրդին կը պարտիմ յաջողութիւնս, պատասխանեցի ժպիտով մը, որուն ծածկած հեզմանքը ակներեւ էր:

Նման վիճակի մէջ գտնուող հարիւրաւորներէն մէկն էի, որ սակայն կրցայ անպարկեշտ նախարարի մը դասը տալ, փոխանակ իր նիւթական պահանջքին տեղի տալու, մերժելով մասնակցած ըլլալ նեխած վարչաձեւի մը շարունակուելուն: Այո՛, ես կրցայ անպարտաճանաչ նախարար մը ոտնակոխել, դիմելով օրէնքէ վեր հեղինակութեան մը՝ կայսրին: Սակայն ես անոր դիմելով չէի՞ օժանդակեր ուրիշ ապօրինութեան մը՝ կայսրը նկատելով օրէնքի եւ արդարութեան գերագոյն դատաւոր: Բայց ի՞նչ կրնայի ընել, երբ մարդկային տարրական իրաւունքս չէր յարգուել անպարկեշտ պետական պաշտօնատարներու կողմէ եւ համատարած սորկային մտայնութիւնն է որ կը քաջալերէր մակաբոյժ նախարարներ եւ իրաւունքի ու արդարութեան գերագոյն դատաւոր, ամենագոր կայսրեր:

Ահա այս ապօրէն եւ անարդար նեխած կացութիւնն է որ պատճառ եղաւ տիրող վարչակարգին տապալման եւ «կայսրութեան» մը փլուզումին:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

ԱԻԵՏԻՄՆԱԶԱՐԵԱՆ

Երկրորդ Աշխարհամարտից յետոյ, երբ արդէն Չախշախուած էր ֆաշիզմը, Սովետական Միութեան Գերագոյն խորհուրդը, ընդառաջելով Սովետական Հայաստանի պետութեան, ինչպէս նաեւ ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Զ.ի դիմումնագրերի՝ 1946 թուին արտօնեց ներգաղթը:

Ըստ եղած կարգադրութեան, աւելի քան 100 հազար հայեր Սփիւռքից, այդ թուում իրանից, Լիբանանի, Սիրիայից, Կիպրոսից, Յունաստանից, Ֆրանսայից պիտի հաստատուէին Մայր Հայրենիքում: Նրանք պիտի օգնէին վերականգնելու, երկրի քայքայուած տնտեսական վիճակը, գիւղատնտեսութիւնը եւ լրացնէին հազարաւոր գոհուածների թափուր մնացած տեղերը: Առ այդ, իրանից Հայաստան մեկնեցին 20-25 հազար հայեր, ինտուն տոկոսով գիւղացիներ, որոնք լծուեցին աշխատանքի եւ շատերը արժանացան պետական մրցանակների:

Հայրենադարձութեան պատճառով հայաթափուեցին Զարմահալ գաւառի հայաբնակ գիւղերը, ինչպէս նաեւ Փերիայի եւ Ղարաղան գաւառների մի շարք շրջաններ: (Այսօր Փերիայում ապրում են միայն 60-70 հայ ընտանիքներ): Սակայն իրանահայութեան խանդավառութիւնը երկար չտեւեց: 1947-ին, ինչ-ինչ պատճառներով կանգ առաւ ներգաղթը եւ հազարաւոր հայ գիւղացիներ որոնք հերթագրուած էին, մնացին Թեհրանի փողոցներում, բաց երկնքի տակ:

Սովետական եւ Ամերիկեան բանակները Թեհրան եղած տարիներին, ունէին իրենց զօրանոցները: Իրանի կառավարութեան թոյլտուութեամբ անպաշտպան հայ գիւղացիների մի մասը տեղաւորուեց «քեամիբերում»: Բազմահարիւր հայեր Թեհրանի Բեհշաթաբաթ թաղամասի աւերակների վրայ կառուցեցին թիթեղեայ եւ ցեխէ «տներ»: Օգնութեան հասաւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որ շատ խոշոր գումարների յատկացումով, յաջողեց հայ գիւղացիների մի մասին տեղաւորել Թեհրանից դէպի արեւմուտք 50 քլմ. հեռու գիւղերում, ստեղծելով նրանց համար «Նայիրի», «Արարատ», «Թունեան», «Նոր Անի» դպրոցները: Դրանց գուզընթաց երկիրք խոյացան Ս. Գրիգոր եւ Ս. Թարգմանչաց եկեղեցիների գմբէթները, եւ այլն: Երիտասարդները գործի անցան զանազան գործարաններում

հիմնեցին մեքենաների նորոգման նոր կեդրոններ, հաստոցաշինական խանութներ, եւ կարճ ժամանակից յետոյ հազարաւոր հայեր արդէն բարեկեցիկ վիճակ ունէին, եւ օգնում էին երկրի զարգացմանը եւ բարգաւաճմանը:

Իրան-իրաք պատերազմի տարիներին, հարիւրաւոր հայ մասնագէտներ մեկնում էին ռազմաճակատներ եւ նորոգում աւերուած եւ վնասուած մեքենաները: Բազմաթիւ հայ բժիշկներ ամիսներ մնում էին պատերազմական հիւանդանոցներում եւ օգնում, բժշկում վիրաւորներին: Ի դէպ, այդ ութը տարիների ընթացքում հայութիւնը տուեց 200 զոհ եւ մի քանի հարիւր գերիներ, որոնց մի մասի ճակատագիրը դեռ մինչեւ այսօր էլ անյայտ է:

1979 թուին տեղի ունեցաւ Իրանի իսլամական յեղափոխութիւնը, երբ եւրոպացի ճարտարագէտները եւ մասնագէտները լքում էին Իրանը, յեղափոխութեան առաջնորդն ասել էր.

- Ով ուզում է թող գնայ, մենք կարիք չունենք դրանց, մենք հայ մասնագէտներ շատ ունենք իրանում...

Ի գուր չէր, որ Հայաստանի 1988 թուի աւերիչ երկրաշարժին Իրանի կառավարութիւնը առաջինն էր, որ շտապեց օգնել Հայաստանին, մէկ տասնեակ օդանաւերով ուտելիք, հագուստ եւ անհրաժեշտ իրեր դրկելով Հայաստան: Այդպիսով, Իրանի իսլամական պետութիւնը ուզեց մասամբ փոխարինել իրանահայութեան ծառայութիւններին:

1946 թուին ներգաղթի պատճառով դատարկուեցին երբեմնի շէն ու պայծառ հայաբնակ գաւառների գիւղերը: Տասնեակ հազարաւոր հայ գիւղացիներ թողեցին իրենց ճակատի արդար քրտինքով վաստակածը, ծախեցին անասունները շատ էժան արժէքներով, լեցուեցին Թեհրան, Հայաստան մեկնելու համար: Սակայն եկան չարաբաստիկ 1947-48 տարիները եւ կասեցուեց ներգաղթը, որի հետեւանքով հազարաւորներ մնացին անտուն ու անճարակ: Իսկ այսօր, 21րդ դարակգբին, երբեմնի հայաշատ մեր գաղութում նուազել է հայութեան թիւը: Շատերը թողնելով երկիրը, գալիս են Մ. Նահանգներ: Իրանի նախկին հայաբնակ շատ քաղաքներ ու գիւղեր հայաթափուել են: Անգործածելի են մնացել այդ վայրերի եկեղեցիները, դպրոցական փառաւոր շէնքերը ու բազում կալուածներ:

Հայի դառն ճակատագիր...

ԿԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ 1060 North Allen Ave Pasadena, CA 91107 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Զետաքրքրուողներէն հեռաձայնել (626) 398-0506

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

# ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻՊՐԱՆ ԱՐՔԱՅ

Հայրենապաշտ Տիգրան Բ. Արքայ,  
«Սուրբարի-Միտանի-արմենակամ հին աւանդական հողերը իր պետութեան մէջ վերամիաւորող Ազգային Մեծ Գործիչ»  
Մարտիրոս Գաւուրճեան

Հայոց «Հայկազուն» թագաւոր, Արտաշէսի թոռնորդի, Արտաւազ Բ. արքան էր մահացել: Թագաժառանգ Տիգրան որդին նրա, պարթեանների պալատում պատանդ էր: Հայոց արքունիքի պատուիրակներն էին զննել պալատ, բանակները պարթեանների Միհրդատ արշակունի թագաւորի հետ, պատանդ Տիգրանին վերադառնալու հայոց երկիր: Գահաժառանգ Տիգրան Բ. թագաւորելու էր Հայաստան աշխարհին: Պարթեւ թագաւորը, նրա ազատման համար, պահանջել էր սահմանակից եօթանասուն հովիտները գիջելու իր երկրին: Թողին հովիտները պարթեաններին: Տիգրանը վերադառնում էր Արտաշատ:

Հայոց աշխարհի գահաժառանգ Տիգրանն էր արքունի պատուիրակների հետ ժամանել հայոց երկրի սահմանային Արտազու գաւառ: Վահէ Վահեան, Հայկազունի, Ամատունի, Սրուանձտեան, Մոկաց, Գնդունի, Պահլաւունի, Բզնունի, Կամսարական, Սլկունի, Խորխորունի նախարարներն իրենց փոքրաթիւ գունդերով եկել էին դիմաւորելու գահաժառանգին: Պինդ գրկել էին Տիգրանին, հաւաստել իրենց հաւատարմութիւնը հայկական թագին եւ նախարարական իրենց զինական գունդերով զօրակցութիւնը հայոց արքային: Տիգրանն էր իջել նստոյգից, գետնից մի բուռ հող վերցրել: Այն բարձր պահած՝ դէպի արեւը, իր քաջ նախնիները Արամի, Հայկի, Արայի անուններով երգուն էր պաշտամունք նուիրել նախնիների քրտինքով, նրանց աւիւնով սրբացած հողին, անասան պահել նրա սահմանները, անդորր ու բարգաւաճում բերել հայրենի երկիր Հայաստանին:

Սահմանամերձ աւանների հայերը, բամբուկներով, փողերով, թմբուկներով եկել էին ողջունելու հայոց երկրի գահաժառանգի վերադարձը: Դէպի Արտաշատ տանող ճանապարհի շէնքերում, խրախճանք էր: Արմինայի գահին գալիս էր բազմելու իրենց Հայկազուն Արտաշէս թագաւորի գաղմից մի նոր թագաւոր, հայոց աշխարհին նոր տիրակալ:

Անբաւ ցնծութիւն էր Արտաշէս արքայի Մեծ ու Փոքր Հայքերում: Նախախնամութեամբ, թէ իրենց աստուածների մեհեանների քուրմերի պայծառ տեսիլքի ոգու հրայրքն էր, որ հայոց աշխարհը նման ցնծութեամբ էր դիմաւորում նոր արքայի գալուստը, որը նրան տանելու էր հազարամեակների փառքին, արեւելքի վրայ իջնելու էր իրենց Միհրական հաւատքի երրորդութեան իմաստնութիւնը:

Հայոց շէնքերի մարդիկ երկնաուք ցնծութեամբ էին դիմաւորել գահաժառանգի ժամանումը: Իրենց սարերում ողջ բռնուած երէներ էին գոհաբերել նրա նստոյգի առաջ: Նրանց տաք արիւնը յեղել գահաժառանգի վրայ, որպէսզի իրենց աշխարհի լեռների վեհութեան խորհուրդը հոսէր նրա սրտին: Իրենց աստուածների պարգեւած բարիքը՝ պտուղ, ցորեն, իրենց լեռների լանջերի ծաղիկ էին շող տուել նրա առաջ, որ առատութիւն լինէր երկրին, հայոց հողի ոգին հոսէր սրտին:

Արտաշատ, Արտաշէս «անուշ» արքայի հիմնադրած քաղաք, հայոց աշխարհի ամէն կողմերի մայրուղիները հատանող մայր ոստան: Հայոց աստուածների արեւամերձ գահ, իրենց Միտանի, Արատտա, Հայասա, Նայիրի, Արմինա երկրների սրբազան խորհրդանիշ, հայոց քարէ բաբախող սիրտ Արարատ լեռան հովանու տակ բացուած դաշտավայրի շէնքերի հայերը եկել էին իրենց աշխարհի գահաժառանգին դիմաւորել: Ոստանի մուտքին էին, գահաժառանգ Տիգրանը իջել էր նստոյգից, ծունկի եկել նրա մայր դարպասի առաջ: Ուղեկցող նախարարները կողքին կանգնած, այսպէս էր խօսել:

- Երգուում եմ անառիկ պահել իմ նախապապ Արտաշէսի հիմնադրած ոստանի դարպասները: Արտաշատի փառքը կը տանեմ ծովերից ծով, որտեղ իմ քաջերի գէնքը կը հասնի:

Հայոց աստուածները, Արարատի իրենց գահից բուռ, բու ձիւն էին նետել նրա վրայ, որ իրենց արիցեղի ոգու հուրը խարոյկէր հոգում, որ իրենց ծնող ազգի փառքը տանէր աշխարհներ:

Ուղեկցող նախարարները, Մեծ ու Փոքր Հայքերի բոլոր նախարարները, աշխարհային ժողովուրդի խմբուել էին ոստանին յարող բլուրի գաղաթի սիւնազարդ մեհեանի առաջ: Արքունի պահապան գօրքի շարքերն էին զգաստ կանգնել նրա չորս բոլորը: Հայոց Միհրական պաշտամունքի հովանաւոր Վահէ Վահեան տոհմի իշխանը, Բարձր Հայքի Դերջան գաւառի Բագառիճ աւանի Միհրի մեհեանի քրմապետի գլխաւորութեամբ, գահաժառանգ Տիգրանին առաջնորդել էին մեհեան:

Նրա մուտքին, քուրմերը եղէգնեայ կրակալոյս ջահերը վեր պարզած՝ նրանց տարել էին Միհրի բազինի առաջ: Տիգրան, հասուն տարիքի առնակազմ քաջագուն, աչքերից ծայթքող Միհրի կրակալոյս, սեւաթոյր վարսեր ուսերին իջած, ծիրանի պարեգօտ իրանին, ծնրադրել էր արեւալոյս Միհրի առաջ: Այսպէս էր խօսել քրմապետը:

- Հայոց տիեզերածին աստուածները, Մեծ ու Փոքր Հայքերի արքայ Արտաւազ Բ. տարան իրեն տիեզերական արեւային տաճար: Միհրն է լոյս փուռ մ հայոց աշխարհին, չի մարել հայոց «Հայկազուն» արքայ Արտաշէսի լոյսը: Ահա, այս մեհեանի Միհրի բազինի առաջ, Արմէն-հայերի Հայկ, Արամ, Արա, Արամէ նահապետներ ու Արտաշէս արքայի անմիջական գարմից Տիգրանին եմ թագադրելու:

- Վահագնի Վահէ Վահեան մեհեանի քուրմը վկայել է, որ առատալոյս աստղ է անցել հայոց երկնակամարից, իր կրակի լոյսն է սփռել հայոց դաշտերին, կարմիր համբոյր շողել հայոց լեռներին: Նա գուշակել է, որ հայոց «Աստուած» Հայկ-Խալդին է, որ իր շուրջ հաւաքած աստղերից ամենափայլունը Միհրի լոյսն այդ, հայոց նոր արքայի սրտին քաջութիւն է յորդեղել, երկրին հզօրութիւն, ուժականութիւն է պարգեւելու: Այդ աստղի լոյսը, հայոց արքայի գորական գունդերին յարթ թանակների ներշնչանքի ոգի է

հոսելու, նրանց տանելու հեռու աշխարհներ:

- Ահա, նախապապ Արտաշէսի նախնիների Միտանի-Արարատա, Հայասա, Նայիրի, Արմինա թագաւորների թագը: Երկիրը խորհրդանշող նրա ետին իջնող ծալքեր, գաղաթին՝ արեւի սկաւառակը, որ նրա վրայի ճառագայթներից յորդած լոյսը իր թեւերի վրայ պահէր հայոց աշխարհը, բարիք հոսէր հայոց արտերին, հայոց քաջերի գէնքերին յաղթանակի լոյս ցօղէր: Թագի արեւի սկաւառակի երկու կողմերին շողարձակող պայծառ արեւն են գրկել՝ արեւի ու կրակի աստուածութեան խորհրդանիշ երկու արծիւները: Ահա այդ թագը դնում եմ գահաժառանգ Տիգրանի գլխին, նրան հռչակում՝ «Տիգրան Երկրորդ Արքայ Մեծ ու Փոքր Հայքերի»:

Հազար փողեր են հնչել, հազար բամբուկ գարկել, ժողովուրդն է որոտագին կանչել՝ «Փառք հայոց Տիգրան Երկրորդ Արքային»: Արքունիքը, նախարարները, աշխարհային ժողովուրդը շուրջ պար էին բռնել մեհեանի առաջ, նրա շուրջը: Փառաբանել էին հայոց աստուածներ՝ Արա Արամազդին, Նանէին, Գիսանէին, Ծովինարին, Անահիտին, Վահագնին, Մհեր-Միհրին, Աստղիկին, Վանատուրին, որ գօրավիզ լինէին հայոց աշխարհին, հայոց քաջերին, որ նրանց գէնքերը լինէին իրենց սահմանները: Փառաբանել էին հողն հայրենի, որ իրենց բարի պարգեւէր: Փառաբանել էին իրենց պարտէզների ծառերին, որ ամէն գարուն մայրամային, եւ իրենց նախնիների ստուերները գալին հանգչէին նրանց ծաղկունքում: Մեհեանը շրջափակած նռնենիներից պայթած նռներ էին քաղել, գարկել մեհեանի պատերին, որ կարմիր կրակի յաւերժութիւն հոսէր նրա որմերի վրայ: Տիգրան արքան էր մեհեանի հրապարակում, արեւն էր իջել թագին, դեղին շողեր քաղած նետել ծիծաղով յորդած մարդկանց վրայ: Ժողովուրդը, հայոց թագին հոսած Միհրի լոյսն էր ավերով վերցրել, շողել դէմքերին, շողել իրենց մանչերի ակներին: Գուհաններն էին փառաբանել հայոց արքային, տաղեր, երգեր ձօնել նրա պատուին: Մայր ոստանը, հայոց շէնքերը ցնծացել էին բազում օրեր: Ցնծացել էր հայոց աշխարհը, ցնծացել էին իրենց սպիտակ գահին իջած հայոց աստուածները, բուռ բուռ ձիւն նետել Միհրի տաճարի վրայ, արքայի թագին:

Արքունիքի աւագանին Տիգրան արքային պալատ էր առաջնորդել: Նրա ընդարձակ սրահում գուհաններն էին բամբուկներով, խորխոր երգերով դիմաւորել հայոց նորընծայ արքային: Ի պատիւ նրան, սրահն էր վառուած ջահերով: Շուրջ պարեր, մենապարեր էին բռնել լուստտ իրաններով հարճերը: Իրենց աստուածների խմիչք, թասերով կարմիր գինի էր հոսել սրահում: Թասերով գինի էին ըմպել, արքային ողջութիւն, հայրենի երկրին հզօրութիւն ու բարգաւաճում, հողին բերրիութիւն մաղթել:

Հեթանոսական խրախճանք էր պալատում: Նախարարների տիկնայք, Վահէ Վահեան մեհեանի քրմուհիները, բեհեգեայ կիսաթափանց զգեստներով սրահ էին եկել շուրջ պար բռնելու: Որոտացել էր սրահը, գինուց, թէ քրմուհիների զմայլանքից էր արբեցել սրահը: Տիգրան արքան, գինով լեցուն թասը ձեռքին, եկել էր պալատի խրախճանքի սրահ: Ողջունել էր արքունի աւագանին, քրմական դասին, ող-

ջագուրուել նախարարների հետ: Գինով լի ոսկհնուր, թագաւորը:

- Ողջութիւն արքունիքի աւագանին, Հայկեան ցեղի տոհմերի աւագներին, հայոց աստուածների քուրմերին: Այս թատով, կարմիր կրակ գինի եմ շող տալիս արքունի պալատի լուսով վառուող այս սրահում, որ անսահման լինեն իմ նախապապի Հայքերը: Հայոց աշխարհի խաղողից քամուած գինու աւիւնը հոսի Արմէն-հայերի քաջերի սրտերին, որ ինձ հետ գնան կուռի, որ իմ նախնիների օտարացած բոլոր հողերը Արմէն-հայերի հետ բերենք Հայքեր: Ես դարբերել կը տանեմ փառքը հայոց աշխարհի: Հայոց աստուածների Հայաստանի երկնակամար ճամբած աստղի լոյսը, իմ մղելիք ճակատամարտերի յաղթանակի տիեզերական պատգամն է:

Առաւօտ, լոյսի փաթիլներն էին իջնում մայր ոստանի վրայ: Երկնից արծաթ շողեր էին մաղուում նրա արեւելեան կողմի լեռներին: Երբ հանդիպակաց լեռան գագաթին արեւը խարոյկ էր վառում, Տիգրան Արքան Միհրի մեհեանում էր: Ծնրադրել էր նրա բազինի առաջ, երդուել հայոց երկրի սահմանները անխորտակ պահել, այն տանել շատ հեռուներ, մինչեւ այնտեղ, ուր իր քաջերի գէնքը կը հասնէր:

Պալատի հազարապետին էր հրաւիրել, տեղեկացնելու իրեն երկրի գանձարանի, հայոց բանակի մարտունակութեան, սահմանային բղէշխութիւնների ամբողջութիւնների վիճակի, հարկերի գանձման ընթացքի, երկրի անվտանգութեանը սպառնացող խնդիրների վերաբերել:

Տիգրան Արքան ժառանգել էր պարթեաններից պարտուած հայոց պետութիւն, պատանդ գահաժառանգ, որի ազատման համար հայոց երկիրը հողը էր գիջել: Տկարացել էր իր հզօր նախապապի երկրի ռազմական կարողականութիւնը: Բարեփոխել երկիրը, վճռել էր նա: Երկրի անվտանգութեան երաշխիք բանակն է, նրա հետեւակի ու այրուծի սպառազինութիւնը, մարտ վարելու նոր ռազմավարութիւնը, մտորել էր նա:

Ժամանակի հրամայականն էր պահպանել, շտապ վերակառուցել բանակը, սպառազինել այն աւելի ամուր ու կատարելագործուած գէնքերով, երկաթ ու պղինձ շատ էր երկրում: Մտադրել էր, մասնաւորապէս, ծանր զրահաւորել հեծելագօրը՝ հայոց այրուծին, ստեղծել ամբողջ արեւելքում ամենամարտական զինական միաւորումը: Այն, բազում ճակատամարտերի ելքը պիտի վճռէր, եւ վճռել էր: Արեւմուտքի Հռովմն էր ներխուժել արեւելք: Պարթեական, Հռովմէական աշխարհակալութիւնները շրջափակել էին հայոց երկրի Հայքերը, սպառնում նրա անվտանգութեանը:

Հայոց արքան, իր անսահմանափակ իշխանութիւնն էր հաստատել երկրում: Պետութեան կառավարման սանդղակի վերին աստիճանին էր բազմել արքան: Նրա անմիջական ենթակալութեանն էին քրմապետը եւ երկրի աշխարհական կառուցները:

Հրամայել էր գինուրազրել հայքերի բոլոր շէնքերի բերը, բերը կտրիճ տղամարդկանց, մայր ոստանին մօտիկ ստեղծել զօրակայան, յարձակողական մարտավարութիւն ուսուցանել հետեւակ ու



### ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱ ԱՐԿԻՆԻՍՆԵՐԸ

Պատահել է, երբ խօսքը գնա-ցել է բուսակերութեան ունեցիկ մասին, որոշ մարդիկ, ովքեր սիրում են կենդանական սնունդների սպառումը կամ շահագրգիռ են այդ հարցում, անմիջապես սկսել են հակազդեցություն ցուցաբերել ասելով, թէ, «անբաւարար է», «թերի է», «մարմնի պահանջները չի լրացնում» եւ այլն: Վերջին հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ այս արտաքայտութիւններն ու կարծիքները միանգամայն սխալ են, եւ յարձակումները կատարում են բուսական պրոտէինի հանդէպ:

Արդիւնաբերական անասնաբուծութեան զարգացմամբ, տաւարի ու հաւի միս, ձուկ եւ կաթնամթերք արտադրող վիթխարի ընկերութիւնները մի միայն իրենց շահը նկատի առնելով տարիներ ի վեր ժողովրդի մէջ անհիշատ տեղեկութիւններ են սփռել՝ պրոտէինի եւ յարակից արդիւնաբերութիւնների առաւելութիւնների մասին: Սկզբում պրոտէինը չափազանց նուիրական դարձուեց, իբր թէ այլ բնոյթի կենսանիւթերը յատուկ կարեւորութիւն չեն ներկայացնում մարդու մարմնի համար: Այնուհետեւ պրոտէինը համահասարակաց մտն, ասես թէ բոյսերը գուրկ են պրոտէինից, դրա համար էլ, երբ խօսուում է բուսակերութեան մասին, ոմանք կարծում են, թէ պրոտէինը մի միայն գտնուում է կենդանական մթերքների մէջ, հետեւաբար բուսակերն ինչպէ՞ս կարող է լրացնել պրոտէինի պահանջը:

Այնուհետեւ այսպէս արծարծուեց, թէ բոյսերի պրոտէինը թերի է եւ ցածրորակ: Այսպիսի վարկածների համաձայն էր, որ աննդի մասնագէտները յայտարարեցին, թէ կենդանական պրոտէինը լաւն է եւ կատարեալ: Այս կարգի գովազդների շնորհիւ էր, որ պրոտէինը համահասարակաց մտն, կաթն ու պանիրը՝ կալցիումին, տաւարի միսը՝ երկաթին, եւ հաւկիթը՝ լաւագոյն պրոտէինին:

Այսօր մի շարք հետազոտութիւնների եւ ապացոյցների շնորհիւ պարզուեւ է, որ ոչ միայն այդ յաւանտութիւնները անհիմն են, այլ լեւ օրըստօրէ ապացուցուում է, թէ կենդանական պրոտէինի գործածութիւնը մարդու օրգանիզմի համար վնասակար է եւ վտանգաւոր: Այս օրերին բաւական ուսումնասիրութեւ են կենդանական մթերքների սպառման դերը՝ սրտանոթային հիւանդութիւնների, խոլեստերինի եւ արեան գերձնշման, կրծքի, շագանակագեղձի, լեարդի ու երիկամների հիւանդութիւնների եւ շաքարախտի առաջացման մէջ: Այսօր արդէն պարզուեւ է նաեւ, որ կենդանական նիւթերը գուրկ են ֆիբրերի, անտիօքսիդանների եւ ֆիտոքիմիկալների պէս նիւթերից, որոնք մեր օրգանիզմը պահպանում են քաղցկեղի դիմաց, մինչդեռ բոյսերը առատօրէն օժտուած են հակաքաղցկեղային նիւթերով:

Բուսակերութեան հետեւանքով շատ է ասուել, որ մարմնի պահանջած երկաթը, անագը եւ B12 վիտամինը չի բաւարարուում: Բաւական է այս կապակցութեամբ անդրադառնալ 2009 թուականին Ամերիկայի Մանդիմիտիւնների կողմից

միջ հրապարակած տեղեկութիւններին:

#### 1 - Ե Ր Կ Ս Թ

Երկաթի պակասի պատճառով սակաւարիւնութեան դէպքերը հաւասար են բուսակերների եւ ոչ բուսակերների մօտ:

Յիշեալ միտութեան գեկուցարութեան մէջ նաեւ նշուել է, որ թւում է, թէ բուսակերների օրգանիզմը մասկերների համեմատ աւելի լաւ է կարողանում աննդի երկաթը իւրացնել եւ ոչ միայն աւելի շատ երկաթ է ապահովում, այլեւ կարողանում է հակալիզուել երկաթի արտաթորումը: Բուսական կերակուրները լեցուն են C վիտամիններով, որը բնականօրէն ներծծում է երկաթի հետ:

#### 2-ԱՃԱՊ

Թէեւ անագի պակասն ակնյայտ է բոյսերի մէջ, սակայն մասնագէտները բուսակերներին հետազօտելով, նրանց մօտ այդ տարրի պակասը չեն նկատել:

Բուսական ու տելիքների մէջ ընդհանուր առմամբ անագը գտնուում է պրոտէինների հետ, որը բաւական չափով կարելի է տեսնել մրգերի միջուկների ու կորիզների մէջ: Ի դէպ այստեղ պէտք է աւելացնել, որ հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ անագի շատ գործածութիւնը իջեցնում է օրգանիզմում արեան լաւորակ ճարպի, այսինքն՝ HDL-ի քանակը եւ մեծացնում սրտանոթային հիւանդութիւնների հաւանականութիւնը: Նա եւ ապացուցուած է, որ անագի առատութիւնը առաջացնում է մի տեսակ սակաւարիւնութիւն, որը պատասխան չի տալիս երկաթին կամ B12-ին եւ կամ ֆոլիկ կաթիլներին, եւ թւում է թէ պղնձի ներծծումը խանգարուելով, անագի չափն աւելանում է օրգանիզմում:

Այս խնդիրը այն առումով է կարեւորում, որ ըստ երեւոյթին որոշ մասնագէտներ միայն անդրադառնում են աննդանիւթերի պակասին եւ մոռանում են, որ նիւթերի մարսողական ու իւրացման շատ խանգարում ներ իրականում առաջ են գալիս որոշ նիւթերի չափից աւել լինելու հետեւանքով:

Օրգանիզմն օժտուած է չափազանց նուրբ ու հակալիզող մի համակարգով: Ինչպէս սիրտն ինքնաբերաբար բաբախում է, եւ ստամոքսը եւս ինքնագործ կերպով իր մարսողական աշխատանքն է կատարում, այս խելացի համակարգն էլ հսկում է զանազան աննդամթերքի իւրացման աշխատանքը եւ եթէ թոզնել իր յոյսին, տարբեր պայմաններում մարմնի կարիքներին տեղեկ լինելով, բնական ու առողջ ուտելիքներից գերագոյն օգուտը կը քաղի:

Ասում է, թէ այն բուսակերները, ովքեր անում են նաեւ կաթից ու հաւկիթից, այսպիսի դժուարութիւններ (երկաթի, անագի եւ B12-ի պակաս) չունեն: Ի պատասխան պէտք է ասել, որ իրականում կովի կաթն ընդհանուր առմամբ երկաթի տեսակէտից աղքատ է, իսկ հաւկիթը թէեւ հարուստ է երկաթով,

### 9 ՄԻՋՈՑՆԵՐ ԱՒԵԼՈՐԴ ԾԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՄՆՑՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ

- 1) Խուսափիր հիմնական եւ գլխաւոր երեք ժուժերէն (նախա-ճաշ, ճաշ եւ ընթրիք) մին չկատարելէ, որպէսզի յանկարծակի անօթութեան զգացումը չունենաս:
- 2) Պտուղներէ եւ բանջարեղէններէ թեթեւ ուտելիքներ պատրաստել, գանոնք գործատեղիիդ, ինքնաշարժիդ կամ տան մէջ պէտք եղած ժամանակ (ժուժերու միջեւ) ուտելու:
- 3) Մանդականոնի հետեւելու գաղափարը քաջալերող մարդոց այցելութիւն տուր, որպէսզի բարոյական քաջալերանք ստանաս այդ գծով:
- 4) Մանդականոնիդ եւ մարգանքի հետեւելու ծրագրիդ մասին կարգ մը անձնական նկատողութիւններ արձանագրէ, որպէսզի առիթ ունենաս գործնական քայլեր առնելու՝ ի նպաստ առողջութեանդ եւ վայելչակազմութեանդ:
- 5) Երբ պատահական ձախողութեան մը հանդիպիս, այդ հարցին հետ վերաբերիր հանդարտութեամբ եւ համբերատարութեամբ, միեւնոցն ժամանակ մեծ ու կրկնակի կարեւորութիւն տալով աննդականոնի հետեւելու կամքիդ, որպէսզի չպատահի թէ զգացական տագնապի պատճառով անհաշիւ ուտես:
- 6) Ընտրէ մարմնամարզի գործունէութիւններ, որոնք կ'օգնեն քեզի՝ աւելորդ ծանրութիւնդ թօթափելու: Այս մարզաձևերէն են քալելը, վագելը, հեծելանիւ վարելը եւ էլլոպիքսը: Փորձէ այս վարժութիւնները կիրարկել շաբաթական 5 օրերու դրութեամբ եւ իւրաքանչիւրը 45 վայրկեաններու տեւողութեամբ: Միշտ ի մտի ունեցիր, որ մարգանքի ծրագրի մը հետեւիլը առիթ կու տայ առողջ մկաններ ունենայլու եւ գանոնք աճեցնելու, անշուշտ ըստ փափաքի, եւ այս մարգական ծրագիրը կ'օգնէ ստացած աւելորդ ջերմութերը այրելու:
- 7) Մի ամչնար քիչ մը դուն քու մասիդ մտածելու եւ պէտք եղած տեսն ժամանակ եւ ուժանիւթ տրամադրելու՝ աննդականի ծրագիրդ ձեւաւորելու, իր առողջապահական եւ մարգական բաժանումներով:
- 8) Միշտ փորձէ թրամ բանջարեղէններ ուտել իւրաքանչիւր ժուժի ընթացքին, ինչ որ յազեցումի զգացում կը յառաջացնէ մէջդ:
- 9) Հանդարտ մթնոլորտի մէջ գտնուելով լաւ ծամէ ուտելիքներու իւրաքանչիւր պատուր, ինչ որ միաժամանակ առիթ կու տայ քեզի համտեսելու եւ պատարաստուած աննդարար ճաշէն հաճոյք առնելու:

ԼԻԻՍԻ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

թով, սակայն լաւ աղբիւր չի կարող հանդիսանալ այդ նիւթի ապահովման համար:

Կովի կաթի կազէինը կամ պրոտէինը կենդանական աննդանիւթերի մէջ գտնուող անագի իւրացման մեծագոյն արգելակողն է: Մադու կաթը, իհարկէ, գանագան պրոտէիններ է պարունակում, այսինքն՝ ալֆալակ տալ բա մինի շնորհիւ իւրացման առումով, այդպիսի բացասական ազդեցութիւն չունի:

Կենդանական նիւթերից օգտուելու աննդականոնը աւելի շատ խանգարումներ է առաջ բերում աննդի մարսողութեան ու իւրացման տեսակէտից, քան բուսականը:

#### 3-B12 վիտամին

Սա այնպիսի վիտամին է, որ ոչ կենդանիների կամ բոյսերի միջոցով է պատրաստուում, այլ բակտերիաների, ապա աննդի բնական հոլովոյթով փոխադրուում է կենդանիների, ինչպէս եւ մարդկանց օրգանիզմը: B12 վիտամին պատրաստող բակտերիաները տարածուած են մարսողական ամբողջ գործարանով մէկ, որի գոյութիւնը մեծ ու կարեւոր նշանակութիւն ունի մարդու օրգանիզմի համար եւ պիտի ասել, որ դրա պակասը երբեք չի նկատուում կատարեալ բուսակերների մօտ:

B12 վիտամինը գլխաւորապէս կուտակուում է մարդու լեարդում:

Ասում է, թէ մարդու օրգանիզմի 7 տարուայ պահանջած B12 վիտամինը միաժամանակ կուտակուում է լեարդում: Բացի այդ մարդու մարմնում մի այնպիսի համակարգ գոյութիւն ունի, որ լեարդից

արտանետուած B12 վիտամինը լեդիի միջոցով կարծ ադիքի վերջնամասում կրկին ներծծուում է լեարդում: Այս գործօնները, ինչպէս եւ մարմնի ամեթօրեայ պահանջած B12 վիտամինը այնքան քիչ է, որ դրա պակասը հազիւ թէ զգալի լինի:

Նաեւ պիտի աւելացնել, որ տեսականօրէն թւում է, թէ բուսակերների մօտ այդ նիւթի պակասը շատ է, մինչդեռ իրականում դրա պակասն աւելի զգալի է ոչ բուսակերների մօտ: Դրա պատճառներից մէկն այն է, որ մարդու եւ կենդանիների ադիքների բնական միջավայրը միանգամայն փոխուել է կենդանակերերին գանագան անտիբիոտիկներ խառնելով, որն անուղղակիօրէն մտնում է մարդու օրգանիզմը:

Բուսական կենդանական աննդանիւթեր աւելի քիչ գործածելու պատճառով շատ աւելի քիչ են ենթարկում մարսողական, ներծծման խանգարումների, ստամոքսի թթուալիութեան եւ մարսողական գործարանի մթնոլորտի փոփոխանութեան, եւ առաւել քիչ են հանդիպում անտիբիոտիկների ու հորմոնների:

Օրգանական բուսական նիւթերի օգտագործումը միանգամայն առողջ մթնոլորտ է ստեղծում բուսակերների մօտ B12 վիտամինի պէս օգտակար բակտերիաների աճի համար:

Եւ ընդհանրապէս կարելի նշել, որ կենդանական աննդամթերքում այնպիսի նիւթեր չկան, որ դրանց աւելի լաւ տեսակը չգտնուի բուսական ուտելիքներում:

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍԵՒԱԳՈՅՆ ԷՋՈՒ»

Պոլսոյ պաշտօնեաներուն մէջ: Զգուշաւոր, մանրակրկիտ կերպով ծրագրուած, եւ անընդհատ առաջ տարուած, հայկական ջարդերն ու տեղահանութիւնը յղացուած են մէկու մը կողմէ, հրամայուած են մէկու մը կողմէ եւ գործադրուած են առանձնապատուկ նպատակի մը համար: Ո՞վ է յղացած: Ո՞վ է հրամայած: Հայկական արիւնոտ իրականութեան ետին ի՞նչ կայ թաքնուած:

Այս գաղափարը նոր է: Ինչպէս տեսանք, հայեր իրենց վրայ հրաւիրեցին Երիտասարդ Թուրքերու անվտանգութիւնը եւ ատելութիւնը, ամէն ինչ ընդունելով եւ հաւատարմով թէ՛ Սահմանադրութիւնը իրական Սահմանադրութիւնը ըլլալ սահմանուած էր:

Ատանայի ջարդը վերինը հաստատող փորձն էր՝ անոնց կողմէ, որոնք խլելով Ապտիւլ Համիտի իշխանութիւնը, որդեգրած էին անոր հայաջինջ քաղաքականութիւնը եւ մեթոտները: Այդ օրերուն, մէկէ աւելի Երիտասարդ Թուրքերու բերնէն լսեցի իրենց սիրական խօսքը, որ նոյն ատեն կը յեղեղուէր «Հայկական Հարցէն ազատելու միակ կերպն է ազատիլ հայերէն»:

Ատանայի մէջ սկսուած գործը վերջացնել քաղաքական իտէալ մը դարձաւ ամբողջ վեց տարի: Հասաւ իրականացումի պատեհ առիթը, գոր թուրքեր իսկոյն խլեցին:

Դաշնակիցներ երբ Տարտանէլի վրայ յարձակումի սկսան, Պոլիս գտնուողներուն յայտնուեցաւ հայ ցեղի դատավճիռը վաղուց ստորագրուած եւ պահուած դրան եւ սպարապետական շէնքի խորշերուն մէջ պատարատ դուրս հանուելու եւ գործադրուելու: Կարելի՞ է հաւատալ որ գերման դեսպանութիւնը ատկէ անտեղեակ եղած ըլլայ: Ետոյ թաւաթի հնար էր իր հրամանները արձակել՝ առանց նախապէս իմաց տալու Պարոն Վոն Վանկենհայմի: Հաւանակա՞ն է, որ Պերլինի գերման կառավարութիւնը այս բլանը գիտցած չըլլայ, ենթադրելով նոյնիսկ, որ իր Պոլսոյ ներկայացուցիչը իմաց տալ թերագած ըլլայ:

Ահալապիկ պարզ իրողութիւնները: Այսպէս, Պոլսէն ծրագրուած եւ հրամայուած էր բնաջնջումը, թուրքիոյ Սուլթանին մէկ ու կէս միլիոն անմեղ, յանցաւոր ըլլալու աստիճան հաւատարիմ Քրիստոնեայ հպատակներուն:

Պոլսոյ մէջ գերման դեսպանն էր այն միակ անձը, մէկ խօսքով կրնար արգելել հայաջինջ հրամաններու գործադրութիւնը:

Գուցէ առաջին քանի մը շաբաթներուն, գերման դեսպանը իրերու վիճակէն անտեղեակ ըլլար, բայց, երբ դեռ շատ ուշ էր, իրմէ ինդրուեցաւ Գերմանիոյ ազդեցութիւնը գործածել՝ վերջ զնելու այն արարքին, որ ժամանակակից պատմութեան սեւագոյն էջը պիտի կազմէր:

Քանի որ, հայերու բնաջնջումը սկսելէ առաջ, Գերմանիա մերժեց միջամտել, ան իսկապէս մեղապից գտնուած չըլլա՞ր մօտ մէկ միլիոն մարդկային արարածներու կորուստին՝ սուրով, սովով, ծարաւով, լքումով եւ բռնաբարոճմով: Հայերու յանցանքն էր «խոչընդոտ» ըլլալին: Եւ անոնց խոցելութիւնը եւ անպաշտպանութիւնը կը կայանար քրիստոնեայի իրենց հանգամանքին մէջ:

Եւ միթէ Գերմանիա ոճրա-

գործին ընկեր չըլլա՞ր, երբ կրնար, բայց չմիջամտեց հայ ժողովուրդին ի նպաստ:

Դեսպան Վոն Վանկենհայմ, Միացեալ Նահանգներու առաջարկին վրայ, Պոլսոյ մէջ, Մորկընթաու յայտարարեց, թէ Գերմանիա թուրքիոյ ներքին գործերուն չի խառնուիր: Ուաշինկթընի դեսպան Վոն Պերնշթօրֆ տեսնելով, թէ հայկական ահաւոր նախաճիւղներու տեղեկագիրները խիստ ցաւառիթ տպաւորութիւն կը թողուն ամերիկեան հասարակութեան վրայ, նախ ուրացումը շարունակել փոխեց իր բանաձեւը. «Այս դէպքերը արդարանալի են, որովհետեւ անոնք տեղի ունեցած են հայկական ապստամբութիւնը նուաճելու նպատակով»:

Ամերիկացի միսիոնար մը, մին այն մարդոցմէ, զոր ես անձամբ կը ճանչնամ եւ որուն խօսքին լռելեայն կրնաք վստահիլ, Ասիական Թուրքիոյ քաղաքներէն մէկուն մէջ տեսած է գերման պաշտօնեայ մը, որ թրքական հրետանին կ'ուղղէր հայ անգէն քաղաքացի բնակչութեան վրայ: Երկու տարբեր տեղեր, գերմանացի հիւպատոսներ, եթէ ոչ այլ ինչ, գոնէ պաշտպանեցին ջարդի եւ տեղահանութեան Օսմանեան քաղաքականութիւնը:

Հայնագոյն եւ պատասխանատուութեան աւելի ընդհանուր բարոյական գետինի վրայ՝ իբր իր եղբօր պահապան՝ Գերմանիա յաւէտ դատապարտելի է, ինք միայն ունենալով միշտ, եւրոպական բոլոր ազգերու մէջ, ջարդերը կասեցնելու գործիւնը, գոր չուզեց գործածել...:

Գերման գրողներ, որոնք առաջինն եղած են տարփողելու հայ ցեղը իր առաքինութիւններուն եւ քաղաքակրթութեան ի նպաստ կատարած իր դերին մէջ, այսուհետեւ դժուար պիտի գտնեն պաշտպանել, ի գոհացում իրենց ապագայ սերունդին, գերման կայսրութեան անշարժութիւնը՝ ի տես հայ ազգի բնաջնջումին:

Գերմաններու դէմ եղած արդարացի ամբաստանութեան առաջին փաստն է այն, որ լուռ մնացին եւ մերժեցին որեւէ բան ընել, երբ իրենք միայն կրնային կործանումէ փրկել հայերը: Այս պարագային ծանրակշիռ է: Երկրորդ փաստը, սակայն, չարագուշակ երեւոյթ ունի:

Հայ ջարդերու ետին պահուած նպատակը փնտելու ատեն, դէմ յանդիման կու գանք պերճախօս մեղադրանքի մը՝ գերման կառավարութեան եւ գերման ժողովուրդին հանդէպ: Գերմանները եւ միայն գերմանները պիտի օգտուին հայ ցեղի բնաջնջումին:

Վերջ ցոյց տուի, թէ հայեր էական ազդակն են եւ անպայման երաշխաւորութիւնը՝ Թուրքիոյ տնտեսական եւ քաղաքական անկախութեան, Փոքր Ասիոյ մէջ: Ճիշդ այս պարագան կը թուի ըլլալ քար-գայթակղութեան գերման տիրապետութեան: Հայեր, առաւելապէս ուսած ֆրանսական եւ ամերիկեան դպրոցներու մէջ, ֆրանսերէն եւ անգլերէն կը խօսին: Արեւմտեան եւրոպայի եւ Ամերիկայի, մանաւանդ Անգլիոյ հետ իրենց ունեցած առեւտրական յարաբերութիւններուն պատճառաւ՝ հայեր, բնականաբար, գերման առեւտրական ճամբորդներուն առջեւ «խոչընդոտ» եղած են: Իբր միակ առեւտրական եւ երկրագործական տարրը Փոքր Ասիոյ մէջ, հայն էր, որ կրնար իր

ինքնութիւնը պահել Եւրոպայի գաղթականական հոսանքին դէմ: Եւ ասիկա կը նշանակէր «արգելք» հանդիսանալ Անատոլիոյ գերմանացման ծրագիրին: Զէ թէ լոկ Պաղտատի երկաթուղին, այլ բոլոր այն բաներուն համար, գորս Պաղտատի երկաթուղին կը խոստանար՝ Քայզեր Ուիլհելմ Երկրորդ Ապտիւլ Համիտի հետ եղբայրացաւ, 1895-1896-ի հայկական ջարդերուն վաղորդայնին:

Գերմանացիներուն, իբր անհատներ, անիրաւութիւն ընելու ամենադոյզն փափաքը չունիմ, եւ ոչ ալ նպատակ է ակնարկել որեւէ բանի, որ տրամաբանօրէն տեղ չունի գերման միտքին մէջ:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. Տեղեկագիր՝ Հայկական Ջարդերու Ամերիկեան Ցանճնախումբին, Նիւ Եորք, Օգոստոս, 1915:

Այս տեղեկագիրը կը պարունակէ 35 փաղուածֆներ, գրուած Փոքր Ասիոյ ամէն կողմերէն, ընդգրկելով 27 Ապրիլէն մինչեւ 3 Օգոստոս, 1915 ժամանակամիջոցը: 25 հեղինակաւոր ամերիկացիներ, ինչպէս Վսեմ Օսթար Ս. Սքրաուս, երկիցս ամերիկեան դեսպան Կ. Պոլսոյ, Քարտիմալ ձէյմս Կիպրեզ, Ռաքքի Սթիֆըն Ուայզ եւ Չարլս Ու. Էլլիքս, նախկին նախագահ Հարվըրտ Համալսարանի, ստորագրած են այս տեղեկագիրը, որ կը հաստատէ քէ վկայութեան ամենափոքր մասն իսկ ենթարկուած է խնամտու եւ մանրակրկիտ մնութեան:

2. Պաշտօնական տեղեկագիր երեսփոխանական վիճա անութեան, Լոքսբըրու Տան մէջ, Չորեքշաբթի 6 Հոկտեմբեր, 1915:

3. «Հայկական նախնիներ»- «Ազգի մը սպանութիւնը», Լոքս ձէյմս Պրայսի ընդարձակ յայտաբանով, Լոնտոն, Նոյեմբեր 1915:

4. Գերմանացի միսիոնարներու նամակներ, «Sonnenaufgang» ի ուղղուած, եւ Deutscher Hilfsbund fur christliches Liebeswork im Orient-ի կողմէ հրատարակուած:

5. Տիգրան Անդրէասեանի պատմականը, թարգմանուած վեր. Սթիֆըն Թրաուպրիմի կողմէ, լոյս տեսած «The Star of the East» ի մէջ: Լոնտոն, Նոյեմբեր 1915:

6. Ականատեսի վկայութիւններ հրատարակուած հետեւեալ թերթերուն մէջ, Պոլսոյ սիր- Մէր՝ Թէլէկրէմ, 17 Սեպտեմբեր, Փարիզ՝ Թան, 15 Սեպտեմբեր: Լի Մոժ՝ Բուրճէլ տիւ Սանդը, 15 Սեպտեմբեր: Թրիպիւն տը ժընեւ, 4, 24 Սեպտեմբեր, 14 Հոկտեմբեր: Ժուրնալ տը ժընեւ 13 եւ 24 Հոկտեմբեր: Կագէթ տը Լօզան, 24 Հոկտեմբեր: Նիւ Եորք՝ Իվինկլ Փոսթ, 26 Հոկտեմբեր: Լոնտոն՝ Թայմզ 8 Հոկտեմբեր: Ֆրանկ-ֆուրթըր Վայքսընկ 9 Հոկտեմբեր: Փարի-Միտի 17 Հոկտեմբեր: Բոլոր թուականները 1915-ի կը պատկանին:

7. Տարբեր թուականներ կրող շրջաբերական նամակներ, 6 Յուլիսէն մինչեւ 22 Հոկտեմբեր, 1915 ցրուած Ամերիկեան Պորտի կողմէ, կրելով ձէյմս Լ. Պարթըն ստորագրութիւնը. Պոսթոն, Մէս.:

8. ... Տարբեր անտիպ անճական նամակներ: Յայտնի պատմագետներով նամակագիրներու անուցները եւ գրութեան վայրերը կարելի չէ հաղորդել:

9. Անճական խօսակցութիւններ վստահելի անկեղծութիւն եւ անվիճելի հեղինակութիւն վայելող անճներու հետ, որոնք Պոլսէն եւ կամ Փոքր Ասիայէն վերադարձած են 15 Սեպտեմբերէն 20 Նոյեմբերի միջոցին: Այդ անճաւորութիւններու անուցները առ այժմ հարկադրուած են քաղտնի պահել:

**ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**  
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

**Զեր Ծանուցումները**  
**Վստահեցէք «Մասիս»**  
**Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7550)**  
**PUBLIC RELATIONS AND COMMUNICATION SERVICES**

The Housing Authority of the City of Los Angeles ("Authority") invites proposals from qualified professional Public Relations firms interested in providing the Authority with public relations and communications services including but not limited to: strategic counsel; media relations; crisis communications; research; creating various written materials and other communication as directed by the Authority's Intergovernmental Relations Department on an "as-needed" basis.. Copies of the RFP may be obtained beginning May 6, 2011 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., May 27, 2011.

### «ԳԵՇ ՊՈԼԻՏԻԿԱ» ԵՒ ՌԵԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարումակուած էջ 5-էն

քան նուազել ենք թուրքիայի երեւակները, նրա որդեգրած գաղափարախօսութեան պատճառով այս օրերուն հասանք»: Հետաքրքրուցինք՝ եթէ հանդէս գար որպէս պատգամաւոր, հայ համայնքի ո՞ր առաջնահերթ խնդիրներն մասին կը բարձրաձայնէր թուրքիայի խորհրդարանում: Նրա փոխանցմամբ, Պոլսի հայ համայնքը բազմաթիւ խնդիրներ ունի: Նա ցաւալի է համարում այն, որ շատ հայեր ձանձրացած են ու զգուած եւ չեն էլ ուզում, օրինակ, թերթ կարդալ. «Նրանք ծանր օրեր են տեսել եւ միշտ թուրքիայից գնալու միտք են ունեցել: Մեր համայնքն էլ ճնշումի տակ չկարողացաւ իր արժէքները պահել: Այժմ թուրքիայում կատարուող փոփոխութիւններին պէտք է օգուտ քաղենք եւ ետ չմնալու ուժը գտնենք, որովհետեւ հազարաւոր հայեր են այստեղ ապրում, մեր զաւակներն այստեղ են, արժէքներ, եկեղեցիներ, հիւանդանոցներ կան, եւ պէտք է դրանց համար աշխատենք: Արգելքներ պիտի ըլլան, բայց մեր իրաւունքները պաշտպանելուն այժմ աւելի մօտ ենք»: Ըստ նրա, հայերը իրենց խնդիրներն ունեն, բայց թուրքիայի համար կարեւորը դեմոկրատացումն է. «Անոր համար որքան որ թուրքիան դեմոկրատ ըլլայ, արդէն փոքրամասնութիւնները խնդիրները կը լուծուին: Օրինակ՝ հայկական դպրոցներ ունենք, որտեղ 50 տարուց աւելի է՝ տնօրէնը, փոխտնօրէնը թուրք են, ինչը միտումնաւոր է՝ հայերին վերահսկելու համար»: Նրա խօսքով, Պոլսոյ նախկին պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի հիւանդ լինելը վատ է անդրադառնում հայ համայնքի վրայ. «Անցեալում մենք Հրանդներ (նկատի ունի Հրանդ Տինքին-Լ. Խ.) ունէինք, բայց ամէն ինչ արգելուած էր, չէինք կրնար անել, հիմա ազատ է, մարդ չկայ, Արամ Աթէշեան Սրբազանը գէշ պոլիտիկա կ'ընէ, կը սպասենք, որ նոր պատրիարք ընտրենք»: Հրանդ Տինքի մահից յետոյ թուրքիայում ապրող հայերի ապագան աւելի փայլուն է տեսնում. «Այս վերջին տասը տարուայ մէջ ժողովրդի մէջ Ցեղասպանութիւնը օրէցօր ընդունողների թիւը կ'աւելանայ, նոյնիսկ ազգայնամոլները կ'ընդունեն, որ հայերի նկատմամբ ինչ-որ բաներ եղած են: Մի տասը տարուայ ընթացքում թուրք հասարակութիւնը կ'ընդունի ցեղասպանութիւնը»:

### ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԷՆ

Մարումակուած էջ 13-էն

1907-1912 տարիներուն:  
Աւետարաններ 13 հատ 1547-1664 թ.  
Մաշտոցներ 6 1682-1703 թ.  
Խորհրդատետր 1 1786 թ.  
Ճառընտիրներ 2 1688-1702 թ.  
Յայնամալներ 5 1682-1702 թ.  
Ճաշոցներ 4 1576-1702 թ.  
Ժամագիրք-Տօնացոյց-Տոնար մը 750 թ.

Տօնացոյց 1 1750 թ.  
Ընթերցող պիտի հարցնէ թէ ո՞վ լսած էր Հագատուն անձանթ անունը եւ այնտեղ գտնուող Ս. Կարապետ վանքը իր 33 ձեռագիրներով: Ահա Արմաշական Պսակ Ծ. Վարդապետ, Խարբերդէն բարբառոսաբար դուրս քշուած եւ նահատակուած, մեզի հասցուցած է պատահիկ այս ցանկը մեր անգին մշակոյթի: Թէ ո՞ր են ձեռագիրները, Աստուած գիտէ:

### ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մարումակուած էջ 17-էն

Ուշագրութիւն դարձնել արիւսակին:  
Այստեղ հարկաւոր է անդրադառնալ մի կարեւոր կէտի եւ դա այն է, որ կերակուրների պատարաստման եղանակը ազդեցութիւն ունի դրանց մէջ եղած նիւթերի ներծծման գործում: Ուտելիքների մէջ վիտամինների պակասի գլխաւոր պատճառներից մէկը դրանց շատ եփելը եւ փոխակերպումն է: Չանազան պրոտէիններ, ինչպէս անգլիաները տաքութեան պատճառով փոխակերպում են: Որոշ վիտամիններ ոչնչանում են եւ նստուածք թողնող շատ հանքային նիւթեր էլ փոփոխուում եւ կամ կորցնում են իրենց յատկութիւնը:  
Աւելում է, թէ ուտելիքները շատ եփելու պատճառով կորցնում են իրենց մէջ գտնուող երկաթի 48 տոկոսը, կալցիումի 31, ֆոսֆորի 46 եւ մագնէզի ու մի 45 տոկոսը: Բոյաների եռացնելու հետեւանքով ոչնչանում են ջրում լուծուող վիտամինները, ինչպէս վիտամինը, B

կոմպլեքսը, B12 վիտամինը եւ ֆոլիկ կաթթուն:  
Կրակի վրայ հաւի, ձկան եւ մսի խորովելը լանգեցնում է քաղձկեղ առաջացնող նիւթերի: Ուտելիքների տապակելը պատճառ է լինում լեցիտինի ոչնչացման եւ խոլեստերինի ազատ արձակուելուն, ապա եւ ճարպի արեան մէջ մուտք գործելուն:  
Ալիւրի, բրնձի ու մակարոնի քամելն ու սպիտակեցնելը պակասեցնում է նրանց միջի ֆոլիկաթթուն, մագնէզիումը, անագն ու E վիտամինը:  
Ուտելիքների փոխակերպումը, ինչպէս պատրիքացիան, հեմոթեանիքացիան, պահածոյացումը եւ զանազան յաւելանիւթերը պատճառ են լինում ուտելիքների գոյնը, համն ու հոտը փոխուի եւ վիտամինները ոչնչանան:  
Հումակեր-բուսակերները օգտագործում են ու տելիքների լաւագոյն տեսակը, որոնք պարունակում են ամենաշատ կենսանիւթերը՝ առանց արհեստական միջամտութիւնների եւ ամենապարզ ու բնական ձեւով:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՊՐԻԼ 24Ի ՈԳԵԿՈՉՈՒՄ

Մարումակուած էջ 8-էն

Տողի ո՞ր բունագրաւուած քաղաքի ընդերքներուն մէջ խրուած ըլլալը:  
Այս բոլոր աշխատանքները կ'օգնեն անոնց մտքերը զարգացնելու, պատմական գիտելիքներ եւ վաւերագրական, փաստագրական տեղեկութիւններ աւելցնելու, գօրացնելով իրենց մէջ պահանջատիրութեան գիտակցութիւնը:  
Արդարեւ, այս տարի Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտութիւնը, Ուրբաթ, Ապրիլ 29ի առաւօտեան ներկայ եղաւ Սուրբ Պատարագի արարողութեան, ուր պատարագեց եւ քարոզեց Հայր Գրիգոր Շահինեան: Ան իր քարոզին մէջ անդրադարձաւ 96 տարիներ առաջ Հայ ժողովուրդի հանդէպ տեղի ունեցած անարդարութեան եւ յորդորեց աշակերտները ճաւատարիմ մնալու նահատակներու աւանդին: Սուրբ Պատարագի աւարտին նահատակաց շարականի երգեցողութեամբ աշակերտները իրենց յարգանքի տուրքը մատուցին մէկուկէս միլիոն զոհերու յիշատակին՝ ծաղկեփունջեր գետեղելով, վարժարանիս շրջափակին մէջ կանգնած ծիծեռնակաբերդի մանրակերտին, որուն յաջորդեց հոգեհանգստեան պաշտօն:  
Յենամիջօրէին՝ ուսանողութիւն, ծնողներ, հիւրեր եւ ուսուցչական կազմ ներկայ եղան վարժարանի Դանիէլեան սրահին ներս կայացած նահատակաց յիշատակի ոգեկոչման, ուր բոլոր աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին՝ երգելով, արտասանելով, նուազելով եւ ներկայացնելով օրուան յատուկ թատրոն մը:  
Օրուան հանդիսավարն էր Տիկ. Լինտա Գանտիլեան, որ իր բացման խօսքով զուգահեռ մը գծեց Քրիստոսի խաչելութեան ու Յարութեան եւ Հայ ժողովուրդի «գող-գոթային» ու «Յարութեան», կոչ ուղղելով աշակերտներուն, որ այս օրը ըլլայ իրենց ուխտի օրը «... Եկէք այսօր խոստացէ՛ք դուք ձեզի, զինուիլ գիտութեամբ եւ ձեր պապերու հաւատքի գորութեամբ, վերադարձնելու մեր երբեմնի շէն կարսը, Սուշը, Զէյթունը, Խարբեր-

դը, կարինը ու քաղցրիկ կիլիկիան եւ այդ միջոցով հանգստացնէք ձեր պապերու հողիները եւ լուծէք անոնց վրէժը...»: Հանդիսութիւնը շարունակուեցաւ մանկապարտէզէն մինչեւ ութերորդ կարգի աշակերտներու արտասանութիւններով եւ կենդանի պատկերներով, վերջին մասին բեմ բարձրացան եօթներորդ դասարանի աշակերտները եւ ներկայացուցին ժանիթ Քասունիի Մեծ Եղեռնը ներկայացնող թատերգութիւններէն համատեղուած պատկերներ:  
Գնահատելի էր 7րդ դասարանի աշակերտներու թատրոնի պատրաստութիւնն ու ներկայացումը, ի մասնաւորի Ուրլիմ Յովասափեանի՝ թուրք սպայ, եւ անոր «խղճի ձայն» ներկայացնողներ՝ Նարեկ Հալչալեանի, Մինաս Առաքելեանի եւ Միքայէլ Սարգիսեանի մեկնաբանութիւնն ու բեմականացումը երկար մենախօսութեան, որ իրենց ճարտար խաղարկութեամբ, արտայայտիչ շարժումներով, եւ յատակ առոգանութեամբ բոլորին՝ միանգամ առաջին դասարանի փոքրերուն, մատչելի դարձուցին, ապա յուզիչ էր գաղթականներու դժուարութիւնները պատկերացնող յաջորդող բոլոր տեսարանները, ուր աշակերտները բոլորն ալ ապրումով ներկայացուցին հանդիսատեսներու աչքերէն արցունք խլելով:  
Ոգեկոչման աւարտին, աշակերտները հոգեկան բաւարարութեամբ եւ գոհունակութեամբ լսեցին վարժարանիս տնօրէնուհի՝ քոյր Լուսինայի եղրափակիչ պատգամը. «Միշտ խօսեցէք հայերէն, հպարտ զգացէք, որ ունինք հարուստ լեզու, մշակոյթ եւ գայն պարծանքով ծանօթացուցէք օտարներուն... այն ատեն է, որ մենք մեր նահատակներու հողիները հանգիստ պահած կ'ըլլանք...»: Աշակերտութիւն, ծնողներ, հիւրեր սրահին բաժնուեցան «Տէրունական աղօթքի» երգեցողութեամբ, վերանորոգելով իրենց ուխտը, եւ խոստանալով հաւատարիմ մնալ իրենց անցեալին, մեր պահանջատիրութեան եւ արդար դատին, որուն ժառանգորդներն են այսօր իրենք՝ նոր սերունդը:

### ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅ

Մարումակուած էջ 16-էն

այրուծի գործին: Հայոց բանակը սպառազինելու ծախսերը հոգալու համար, բացել գանձարանի պահոցները: Մարտ վարելու նոր մարտավարութիւն մշակել, որ հետեւակը իր վրայ վերցնէր մարտի ծանրութիւնը, այնուհետեւ մարտի դաշտ մտնէին այրուծիի վաշտերը, որոնք զարկելով թշնամուն եւ յետոյ ետ քաշուելով, շարունակէին նետերի տեղատարափ տեղալ թշնամու հետեւակի վրայ, զրկելով նրա մարտը շարունակելու հնարաւորութիւնից:  
Ազգի, ցեղի ոգու հրայրքով արբեցած Տիգրան Արքան, ստեղծելով բազմաբերկր մարտունակ հզօր բանակ, Արմինա-Հայաստան հայոց երկրի տէրութեան սահմանները տարել էր իր նախնիների պետութիւններ Միտաննի, Արատտա, Հայաստ, Թեգարամ, Աղձնիք, Մոփք, Կոմմագէնէ, Նայիրի-Արմինա թագաւորութիւնների շրջաններ:

Նրնաք եղել էին հազար, հազար տարիներ իր Արմա-Արմէն նախնիների բնակեցուած սրբազան լեռնաշխարհի տարածքներ, նախապապ Արտաշէսի Բարձր Հայք, Փոքր Հայք: Ըստ Պատմահայր Մովսէս Խորենացու հաւաստման, այդ նոյն տարածքները կոչուել էին Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ, Չորրորդ Հայք:  
Տիգրան Արքան օտար երկրների տարածքներ չէր զաւթել, այլ, հանդիսացել էր՝ «Սուբարի-Միտաննի արմենական հին աւանդական հողերը իր պետութեան մէջ վերամիաւորող ազգային մեծ գործիչ»: Յիրաւի, հայոց գէնքի փառքի հայկագուն Արքայ: Եթէ հայոց տոհմական հայկագուն իշխանական տները շարունակէին հայոց երկրի գահին բազմել եւ հեռուից եկած օտարածին մարդու խորհուրդով չսպասնէին իրենց սիրեցեղական հասուածներին, երբեւի այդպէս չէր լինի, ինչպէս որ եղել:

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

### ՏՐԱՍՊՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Ամբողջական գիտակցութիւնը կը կայանայ մեր այն կարծիքին մէջ, թէ ուղեղը մեքենական վիճակ մըն է՝ ճիշդ մարմնին նման:

Երբ արեւը մայր մտնէ եւ գիշերը իջնէ, եւ երբ արեւը ծագի ու առաւօտ դառնայ, մենք ականատես կ'ըլլանք գիշերուան եւ առաւօտեան վիճակներուն: Մենք պէտք է գիտակցինք այս իրողութեան եւ գիտնանք, թէ մենք չենք գիշերն ու ցերեկը: Այս տիեզերքին մէջ ամէն ինչ փոփոխութեան կ'ենթարկուի եւ այս փոփոխութիւնը բնական կայուն օրէնք մըն է: Մենք հարկ է գանազանենք առարկաներու փոփոխութեան եւ մեր վրայ անոնց թողած ազդեցութեան միջեւ, որովհետեւ մենք ականատեսներ ենք եւ ոչ թէ փոխուողները, եւ ճիշդ այս կը պատահի ուղեղին հետ:

Կը ջղայնանանք եւ այդ վայրկեանին չենք գիտակցիր, թէ այդ պատահածին պատճառը մենք չենք ու երբ չկարողանանք փոխել՝ աւելի կը ջղայնանանք: Այս կը կոչուի վիճակին հանդէպ անգիտակցութիւն:

Իսկ գիտակիցը կը տեսնէ, թէ ջղայնութիւնը պիտի բարձրանայ եւ սեւ մեծ ամպի մը պիտի վերածուի, որ սակայն ի վերջոյ պիտի անհետանայ եւ ինք պիտի մնայ ներկայ ականատես մը՝ շարունակուող իրականութեան մը նման:

Հարկ է լաւ չիշել, թէ երբ ուրախութեան վիճակի մէջ գտնուինք, պէտք չէ կարծենք թէ այս վայրկեանները յաւիտեան պիտի շարունակուին: Մենք պէտք է պատրաստ եւ գիտակից ըլլանք այդ իւրաքանչիւր վայրկեանին, զոր կ'ապրինք եւ հաճոյք կը զգանք անոր մէջ պահուած հաճելի պահէն. այս կը կոչուի «այդ պահը ապրելու արուեստը» (the art of living the moment):

Սակայն պէտք չէ կարծենք, որ այդ վայրկեանը յաւիտեան պիտի

շարունակուի, որովհետեւ այդ նման է գեփիւռի մը, որ մուտք կը գործէ տունէն ներս, վերականգնացում կը շնորհէ, բայց շուտով կը հեռանայ ետեւի դռնէն:

Աշխարհի պատմութեան մէջ, անցուկը մոռցուկ դարձած է, իսկ ապագան մեզի անծանօթ աշխարհ մըն է, հետեւաբար, մենք ունինք միայն այս մեր ապրած վայրկեանը, որ կեանքի վայրկեանն է, որովհետեւ կեանքը ներկան է, ոչ անցեալը եւ ոչ ալ ապագան: Երբ ուրախութեան վիճակներ ապրինք, երախտապարտ պէտք է ըլլանք, եւ երբ այդ վայրկեանները հեռանան, շնորհակալ պէտք է ըլլանք եւ ոչ թէ գանգատող:

Պէտք է գիտնալ, թէ տիեզերքէն եկող ամէն բան կը նմանի նուէրի մը, որ ունի իր յատուկ հաճոյքն ու ցաւը: Այս նուէրը իմաստութիւն մըն է միայն անոր համար, որ գիտակցութեան տէր է եւ ներդաշնակութիւն կը ցուցաբերէ այս տիեզերքի պարի կշռոյթին հետ: Ինչպէս նաեւ հարկ է ընդունիլ առարկաներու գոյգ ըլլալը, օրինակի համար գիշերն ու ցերեկը, մահն ու ծնունդը, երջանկութիւնն ու տխրութիւնը...:

Անիշխանութեան զգացումէն ձերբազատուելու համար, պէտք է դուն քու անձիդ համար գտնես տեղ մը, որուն միջոցով կրնաս հետեւող ականատես ըլլալ փոփոխութիւն արձանագրող երեւոյթներուն, առանց անոնց արտօնութիւն տալու՝ փոխելու քու էութիւնդ եւ գոյութիւնդ:

Հետեւեալ պատմութիւնը կ'օգնէ դժուար պահերը ամենայն գիտակցութեամբ, հաւատքով եւ ինքնավստահութեամբ անցընելու:

Քաջարի մարդ մը իր իմաստուն մարդոց կ'ըսէ, թէ ինք ինքզինքին համար պիտի շինէ գեղեցիկ մատանի մը՝ իր ունեցած

ամէնէն գեղեցիկ ակով եւ այս մատանին մէջ պիտի դնէ չորս բառով գրութիւն մը, որ պիտի օգնէ իրեն՝ իր ամէնէն գէշ վայրկեաններուն մէջ: Այս մարդը այդ իմաստուն մարդոցմէ խնդրեց, որ իրեն համար գտնեն այդ չորս բառերը:

Հարիւրաւոր պատմութիւններու եւ խօսքերու տէր իմաստունները շուտարած մնացին այն խնդրանքին դիմաց: Անոնցմէ ոչ մէկը կարողացաւ գայն կատարել, բացի մէկ անդամէ, որ ծառաներէն մէկն էր: Ան ըսաւ, թէ այդ քաջ մարդուն հայրը մահուան անկողինին մէջ իրեն տուած էր պատիկ թուղթ մը եւ խնդրած իրմէ չկարողալ գայն, այլ տալ թագաւորին՝ գայն դնելու իր մատանին մէջ եւ կարողալ միայն գէշ պարագաներու մէջ գտնուած ժամանակ:

Տարիներ ետք, պատերազմներէն մէկուն ընթացքին, այս քաջ առաջնորդը պարտութեան կը մատնուի եւ իր ձին հեծնալով փախուստ կու տայ դէպի անտառ, ուր կը լսուէր հրացաններու դղրդիւնը եւ ձիերու վրնջիւնը: Այդ վայրէն հեռանալէ եւ որոշ չափով հանդարտելէ ետք, ան կը չիշէ մատանին, որուն մէջ տեղաւորուած գրութիւնը բանալու եւ կարողալու ասկէ լաւ առիթ չէր կրնար ըլլալ, որովհետեւ ան այդ

պահուն նեղ կացութեան մը մէջ կը գտնուէր:

Երբ բացաւ նամակը, քաջ մարդը զարմացած կարդաց գրութիւնը, որ կ'ըսէր. «Նոյնիսկ այս պիտի փոխուի»: Առաջնորդը իր շուրջ զգաց լուսութիւն եւ խաղաղութիւն, մինչ արդէն հրացաններու ճարձատիւները ամբողջութեամբ անհետացած էին:

Առաջնորդը վերադարձաւ իր պալատը, սկսաւ ձեռնարկել իր բանակը վերակերտելու, իր աթոռին վրայ բազմելով՝ կարծես այդ ըլլար միակ յաղթանակը: Ան նոյնիսկ հրահանգ արձակեց այս առիթով հսկայական խրախճանք մը սարքել: Խրախճանքի, ուրախութեան եւ պարի ընթացքին, ծառան մեղմ ձայնով կը կը հարցնէ անոր. «Ի՞նչ գրուած էր նամակին մէջ»: Ան կը պատասխանէ. «Նոյնիսկ այս պիտի փոխուի»: Հոս յանկարծ առաջնորդը ոտքի կանգնեցաւ եւ խաղաղութիւն զգաց, միեւնոյն ժամանակ ան գիտակցեցաւ տիեզերքին մէջ գոյութիւն ունեցող իրականութեան, որն է թէ ամէն բան պիտի փոխուի:

Այսպիսով կը գիտնանք, թէ տիեզերքին մէջ գտնուող իւրաքանչիւր երեւոյթ յարատեւ փոփոխութեան մէջ է, մինչ մարդարածը այդ իրականութիւնն է, որ չի փոխուի կամ բաժնուի:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
(200 ԴՈԳԻ ԸԱՄԱՐ)

**ԱՍԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA

**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

**AMERICAN RELIABLE WINDOWS**

Beautiful while increasing the value of your home with elegant,

**18 months no interest\* Financing O.A.C**

**ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

**Our Windows Qualify For Tax Credits**

Manufacturers rebates & deep discounts available NOW. Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**  
Your Satisfaction is Guaranteed.

www.americanreliablewindows.com

**\$89 Rebate\*** toward the price of new Vinyl Windows  
Rebate Example:  
5 windows = \$445  
10 windows = \$890  
15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591